

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Դասագիրքերու Չափորոշիչներուն Շուրջ Բարձրացած Անտեղի Աղմուկը

Հայաստանի մէջ կը շարունակեն կերպով քննարկել Կրթութեան նախարարութեան կողմէ նշանակուած յափորոշիչները պատրաստած չափորոշիչները, որոնց հիման վրայ դպրոցները պիտի օժտուին նոր եւ արդիական մօտեցումով դասագիրքերով:

Ընդդիմադիր շրջանակներ եւ յատկապէս նախկին ռեժիմին կողմէ ուղղորդող խմբակներուն արդմուկ կը բարձրացնեն, պնդելով որ նոր չափորոշիչները լրամշակող փորձագիտական խմբի ղեկավար Լիլիթ Սկրտչեան կը համագործակցի թուրքերու հետ, որպէսզի աշակերտներուն տրուին «ապագային» եւ «հակապետական» դաստիարակութիւն:

Անցեալ շաբաթ Հայաստանի ՍԴՀԿ «Տխրունի» ուսանողական երիտասարդական միութիւնը հանդէս եկաւ յայտարարութեամբ, յայտնելով իր դրական մօտեցումը պատմութեան դասագրքերու չափորոշիչներուն վերաբերեալ:

«Միութեան անդամները հանդիպում ունեցան ԵՊՀ Պատմութեան ֆակուլտետի դասախօս, Պ.Գ.Թ, դոցենտ, «Պատմութիւն» առարկայախմբի առարկայական չափորոշիչները լրամշակող փորձագիտական խմբի ղեկավար Լիլիթ Սկրտչեանի հետ:

«Կառուցողական եւ առողջ մթնոլորտում քննարկուեցին մի շարք հարցեր առնչուող «Հայոց Պատմութիւն» առարկայի չափորոշիչներին, առարկայի ապագային, դրանում տեղ գտնող միւթերին եւ դրանցում պարունակուող ուղերձներին:

«Լիլիթ Սկրտչեանի կողմից կատարուեցին մի շարք յստակեցումներ, որոնք գրեթէ ամբողջութեամբ ընդունելի են մեր միութեան կողմից:

«Միանալով բազմաթիւ անձերի յստակեցումներին մենք եւս հաստատում ենք, որ չափորոշիչներում չկայ ոչ մի հակապագային, հակապետական դրսեւորում կամ դրա քարոզ, չափորոշիչներում առկայ մի շարք տեխնիկական խնդիրներ ոչ մի աղբիւր չունեն «հակապագային» դրսեւորումների հետ», յատկապէս ըսուած էր յայտարարութեան մէջ:

Յիշեցնենք որ, տարի մը առաջ Տխրունիականները բողոքած էին պատմութեան դասագրքերուն մէջ Արեւմտահայաստանի տարածքին Հայ ժողովուրդի մղած ազգային ազատագրական պայքարի ընթացքին Հնչակեան Կուսակցութեան

Վարչապետ. «Յուլիսեան Յաղթական Մարտերը Ապացուցեցին, Որ Ղարաբաղի Հարցը Չունի Ռազմական Լուծում»

Տաւուշեան ռազմական գործողութիւններէն յետոյ տեղի ունեցած Անվտանգութեան խորհուրդի առաջին նիստի ընթացքին, Նիկոլ Փաշինեան զանոնք որակեց, որպէս Տաւուշի յաղթական մարտեր. - «Նախորդ ողջ շրջանում Ատրպէյճանն ընդունել էր մի այնպիսի կեցուածք, որով Ղարաբաղի հարցի ռազմական ճանապարհով չլուծուած, իր կողմից դա չնախաձեռնելը ներկայացնում էր որպէս զիջում ե՛լ Հայաստանի, ե՛լ միջազգային հանրութեան համար: Եւ մենք այս ողջ ընթացքում Ատրպէյճանի ղեկավարութեանը յորդորում էինք, որ պէտք չէ Հայաստանի հետ խօսել ուժի դիրքերից, ուժի լեզուով, եւ դա անհեռանկար հետտորաբանութիւն է: Եւ, ըստ էութեան, յուլիսեան յաղթական մարտերն ապացուցեցին դա»:

Ուստի, ըստ Փաշինեանին, Պաքուն պէտք է ընդունի, որ Ղարաբաղի հարցը ռազմական լուծում չունի. - «Որովհետեւ նախկինում բազմիցս ասել եմ, որ եթէ Ղարաբաղի հարցն ունի ռազմական լուծում, ուրեմն Արցախի ժողովուրդը կարող է արձանագրել, որ ինքը վաղուց այդ հարցը լուծել, աւարտել է»:

Անվտանգութեան խորհուրդի նիստի ընթացքին, Վարչապետ Փաշինեան նաեւ թուրքերու գործօնին յատուկ անդրադարձած է ընդձե-



Վարչապետ Փաշինեան կը գլխաւորէ Անվտանգութեան խորհուրդի միստը

լով, որ ապակառուցողական դիրքորոշումը Յուլիսին Տաւուշի մէջ յստակ երեւեցաւ. - «Կարծում եմ, որ թուրքերի ապակառուցողական եւ ապակառուցողական գործունէութիւնն էական անհանգստութիւններ եւ մտահոգութիւններ է առաջացնում ինչպէս Մերձաւոր Արեւելի, այնպէս էլ Եւրասիական տարածաշրջանի մեր գործընկերների մօտ: Սա մի օրակարգ է, որն արդէն իսկ ձեւաւորուած է, եւ այդ օրակարգում մեր անելիքները նոյնպէս կարեւորագոյն քննարկման առարկայ պիտի դառնան»:

Տաւուշեան մարտերէն անմիջապէս յետոյ թուրքերու եւ Ատրպէյճանը Հայաստանի սահմանին վրայ համատեղ զօրավարութիւններ կատարեցին, որոնց աւարտին Անքարան նորէն յայտարարեց, որ թուրքերու կ'աջակցի Ատրպէյճանին «Գրաւուած տարածքները ազատագրելու գործով»:

ԱՄՆ-ը Լրացուցիչ 1,4 Միլիոն Տոլարի Աջակցութիւն Կը Տրամադրէ Հայաստանին

Միացեալ Նահանգներու կառավարութիւնը՝ ԱՄՆ-ի Պետական քարտուղարութեան գրասենեակի եւ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալութեան (ԱՄՆ ՄԶԳ, USAID) միջոցով լրացուցիչ 1 միլիոն 436 հազար տոլար յատկացուցած է Հայաստանին՝ COVID-19-ի դէմ պայքարին համար: Այս մասին կը յայտնեն Հայաստանի մօտ ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալութեան գրասենեակէն:

«Ընդհանուր առմամբ, ԱՄՆ կառավարութիւնը Հայաստանին մօտ 4 միլիոն տոլարի հրատապ օգնութիւն տրամադրած է 2020 թուականին: Միացեալ Նահանգները կը տրամադրէ կենսական անհրաժեշտութեան աջակցութիւն, գործակցելով ՀՀ կառավարութեան, միջազգային մարդասիրական գործընկերներու եւ այլ շահագրգիռ կողմերու հետ, բացառելու ներդրումի կարիք ունեցող ոլորտները ըստ առաջնահերթութեան», - նշուած է հաղորդագրութեան մէջ:

ԱՄՆ-ի ՄԶԳ-ն այս նոր՝ 1 միլիոն տոլարի օժանդակութեամբ, կ'աջակցի գիւղատնտեսութեան եւ զբօսաշրջութեան ոլորտներուն տնտեսապէս վերականգնուելու հա-

ՀԿԲՄ-ի Օժանդակութիւնը Կը Հասնի Լիբանանահուրեան

Օգոստոս 4-ին, Պէյրութի մէջ տեղի ունեցած ահաւոր պայթուածէն ցնցուած Լիբանանահայութիւնը կը շարունակէ ամօքել իր վէճքերը՝ թաղելով իր զոհերը, բուժելով իր վիրաւորները, նորոգելով քանդուած ու վնասուած բնակարաններն եւ ազգային հաստատութիւնները:

Տեղւոյն Հայկական կազմակերպութիւնները կ'ընեն իրենց կարելին՝ օգնութեան ձեռք մեկնելու բոլոր տուժածներուն եւ կարիքաւորներուն, օգտագործելով իրենց սահմանափակ միջոցները ու նաեւ Հայաստանէն, Արցախէն ու Սփիւռքի տարբեր համայնքներէն ստացուող նիւթական օժանդակութիւնները:

Հայկական Կրթական Բարեփրական Միութեան (ՀԿԲՄ) Հարաւային Քալիֆորնիոյ մասնաճիւղը ուրախութեամբ կը յայտնէ թէ, մեր համայնքէն ներս կազմակերպուած առցանց եւ նաեւ ուղղակի ստացած նուիրատուութիւնները անմիջապէս ուղարկեց Պէյրութի իր քոյր կառույցին, որոնք նպաստեցին՝ բաց պահելու Հաճըն թաղամասի մեր դարմանատունը,



ուր հաջ եւ տեղացի հիւանդներ կ'ստանան բժշկական խնամք ու կ'իրականացունեն սննդաբաշխումի աշխատանքներ: Մօտ օրէն կը սկսին մեծ վնասներու ենթարկուած մեր միւս հաստատութիւններու վերանորոգման երկարաշունչ աշխատանքները:

Հանգանակութեան արշաւը կը շարունակուի ու կը խնդրենք որ, անոնք որոնք կը փափաքին օժանդակել Լիբանանահայութեան վերականգնումին իրենց նուիրատուութիւնները կատարեն առցանց՝ AEBU.org/donate հասցեով:

ՎԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Մերժումների Ջղակծկումների եւ Վարչապետի Չախողումների Արանքում

ԱՐՄԵՆ ԳԵՈՐԳԵԱՆ

Այսպիսով, նախկին թիւ մէկ փեսայի աւետմամբ՝ վարչապետը «երկրի զարգացման համար սպառնալիք է եւ օր առաջ պէտք է հեռացուի»: Շօշափելի է «հեռացուի»՝ չարագուշակ, եւ «հեռանայ»՝ ըմբռնելի բառերի նուրբ տարբերութիւնը, որը նոյն տարբերութիւնն է, ինչ «ցանկալին» եւ «անկողմնակալը»: Առաջացող հարցերից երեքն առանձնացնեք.

1. Ոչի՞նչ, որ վարչապետի բացարձակ լեզվատիրութիւնն անտեսելն ուղղակիօրէն նշանակում է շրջանցել ընտրողների գործօնը, այսինքն՝ վերադարձ մինչ յեղափոխական վիճակի:

2. Ոչի՞նչ, որ անմիջական գուճահեռ է ընդգծւում Հոկտեմբերի 27-ին նախորդող ժամանակահատուածին, երբ Ազգային Ժողովում գնդակահարուած Վազգէն Սարգսեանի մասին նոյն հոետորաբանութիւնն էր գործածւում՝ թէ նա «երկրի զարգացմանը սպառնալիք է»:

3. Ոչի՞նչ, որ երկրում արտակարգ դրութիւն է, ուր դեռեւս անխնայ մոլեգնում է կորոնավիրուսի համաճարակը:

Այս օրերին մերժումների ակտիւանալու հաշուարկը պարզ է. պայմանաւորուած սոցիալական հեռավորութիւն պահպանելու պահանջով, վարչապետը հիմա չի կարող մէկ կողմ մարդկանց նորից ոտքի հանել, ուրեմն միայնակ ու անպաշտպան է նախկին նոմենկլատուրայի՝ ներառեալ ուժայինների խարդաւանքների ծուղակում:

Կը յաջողուի՞ մերժումները իրականացնել իշխանափոխութեան իրենց մոլեգնի փափաքը, թէ ոչ, ամէն դէպքում, նրանց լայնածաւալ քարոզն ու գործողութիւնները վկայում են, որ ոչնչի առաջ կանգ չեն առնելու, եթէ անգամ վտանգի ենթարկուեն մեր համաքաղաքացիներն ու մեր պետականութիւնը:

Բացի արտակարգ դրութեան իրենց համար «նպաստաւոր» պայմաններից, ուրիշ ի՞նչ գործօններն են հաշուի առել մերժումների կարկառունները, որ համարձակուել են բացառապէս նման ծրագիր հրապարակախոսելու:

Պատասխանն ակնյայտ է՝ գործող քաղաքական ուժի եւ անձամբ վարչապետի պերմանենտ վրիպումները: Իշխող ուժի կառավարման անփորձութեան, քաղաքական անհեռատեսութեան արդիւնքում յետյեղափոխական երկամյակն ամփոփելիս արձանագրուած է հետեւեալը.

1. «Թաւիշը» փաստացի գործել եւ գործում է միմիայն նախկինների նկատմամբ եւ հակասում է յեղափոխութիւնն իրականացնողների նպատակներին:

2. Նախկին իշխանութիւնների գործունէութեանը քաղաքական գնահատական չի տրուելու, ինչն ինքնին նախորդ ուժի շարունակականութեան ռիսկեր է պարունակում:

3. Կեղծուած ընտրութիւններով ընդունուած Սահմանադրութիւնն ու Սահմանադրական դատարանն առանձնապէս փոփոխութեան չեն ենթարկուելու:

4. Յանցաւոր որոշումներ կայացրած դատաւորները, դատախազներն ու քննիչները պատասխանատուութեան չեն ենթարկուել:

լու, շարունակում եւ շարունակելու են նախկին կեդրոնից հրահանգաւորուած տնօրինել ոլորտը:

5. Բարձրաստիճան պաշտօնեաների բարեւարքութեան եւ ապօրինի հարստացման դէմ տեսանելի հեռանկարում փոփոխութիւններ տեղի չեն ունենալու:

Ընդ որում, համավարակով պայմանաւորուած արտակարգ դրութիւնը բացառապէս իշխող ուժի կառավարման անկարողութիւնը, մասնաւորապէս.

1. Պարտադրուած անաշխատունակութեան պայմաններում ոչ միայն վարկային արձակուրդ չարամադրուեց, այլեւ փորձ արուեց համահարթեցնել պարտաճանաչ եւ ոչ պարտաճանաչ վարկառուներին՝ վերջիններիս պատժի արժանացնելու պատճառաբանութեամբ:

2. Յայտնաբերուած չգրանցուած աշխատողներն ամենավերին «մոննաթի» արժանացան՝ օլիգարխների բիզնեսներում աշխատողներին հաւասարեցնելով միջին եւ փոքր ձեռնարկութիւններում զբաղուածների հետ՝ արդիւնքում ի չիք դարձնելով պետութիւնից ակնկալուելիք որեւէ աջակցութիւն:

3. Լիովին ձախողուեց եւ կայծակնային արագութեամբ կասեցուեցին արտօնեալ պայմաններով տրամադրուող գիւղացիական վարկերը՝ այդպիսով մեծ քար գցելով գիւղատնտեսութեան առանց այն էլ կքած թիկունքին:

4. Երկրում մոլեգնում է վարկային եւ հարկային բառիս բուն իմաստով տեւորը. SMS-ներով ու ծանուցագրերով հազարաւոր վարկառուներ եւ գործարարներ սպառնալիքներ են ստանում առ այն, որ եթէ հերթական վճարումը ճիշտ ժամկէտում չկատարուի... արդէն պարզ է, որ կը գործի ԱՔՌ-Ա «սեւցուցակային» մուրճն ու «ստացող» մարմնի՝ ԴԱՀԿ գիւյտինը:

Այս ընթացքում վիճակից եղան փոքրաթիւ, սակայն ահաբեկիչ շահողներ, ինչպէս օրինակ բանկային համակարգն ու խոշոր գործարարները (կամ նախկին օլիգարխները), ինչն ուղղակիօրէն ջուր է լցնում հակայեղափոխականների ջրաղացներին:

Իրավիճակն իսկապէս կարող է վատագոյն իմաստով շրջադարձային լինել, եթէ կտրուկ չձեռնարկուեն «յեղափոխական» միջոցառումներ, հակառակ դէպքում բացարձակ լեզվատիր իշխանութիւնն ձեւաւորողներն ուսերին է ծանրանալու նաեւ «արտահերթ ընտրութիւններից» խուսափելու՝ կանխելով նախկինների վերադարձը եւ ներկաներին «բարով-խերով» հերթական ընտրութիւններին հասց-

Իսկ Նիկոլ Փաշինեանին Ասելն Ամօթ ԶԷ՞. Ինչ Ե՞ն Լցնում Առանց Ամաչելու

ՅԱԿՈԲ ԲԱՂԱԵԱՆ

Ամօթ է ինձ մեղադրել հող յանձնելու համար, ապրիլեան պատերազմի թեմայի վերաբերեալ ասուլիսում յայտարարեց Սերժ Սարգսեանը, չորդորելով փակել այդ թեման: Ի հարկէ, որեւէ լրագրող չլիչեցրեց Սարգսեանին իր հարցազրոյցները Բլումբերգին եւ կիսելովին, որտեղ նա խօսում էր կազանեան պլանի եւ տարածքներ վերադարձնելու պատրաստակամութեան մասին, ասելով, որ համաձայնութիւնը չի եղել Ալիեւի մեղքով:

Միւս կողմից, արժէ քննարկել հարցը, թէ արդեօք Հայաստանի որեւէ ղեկավար իրապէս պատրաստակամ էր տարածք յանձնել, թէ՞ նրանք ստիպուած էին խօսել այդ հոետորաբանութեամբ: Դա էլ քննարկելու հարց է՝ թէ ինչու էին յաղթանակից յետոյ յաղթողները ստիպուած խօսել այդ հոետորաբանութեամբ, բայց այդ հարցերը պէտք է քննարկել իսկապէս «հող յանձնելու դիսկուրսից» ու մեղադրանքներից դուրս:

Ի վերջոյ, Հայաստանի նախկին երեք նախագահներին ու բազմաթիւ բարձրաստիճան պաշտօնեաներին կարելի է ներկայացնել անձնական եւ պաշտօնական պատասխանատուութեան բազմաթիւ այլ հարցադրումներ:

Ասուլիսում Սարգսեանի յայտարարութեան առումով առկայ հարցը թերեւս այլ է. իսկ ամօթ չէ՞ «հող յանձնելու», «դաւադիր պրոյեկտ» լինելու եւ այդօրինակ այլ բաների համար մեղադրել ներկայիս վարչապետ Նիկոլ Փա-

նելու խնդիրը:

Յ.Գ. Առանց նշոյլ իսկ սատիւրայի, լաւելենք, որ գործին մեծապէս կ'օգնի, եթէ վարչապետը, որպէս նախկին քաղաքապետ, նախ ինքն իրենից ներողութիւն խնդրի եւ ապա ապօրինի դատապարտուած միւս բոլոր քաղաքապետներին, ապա յայտարարի քաղաքական գնահատական հնչեցնելու մասին յայտարարութիւն, եթէ անգամ այդ գնահատականը գրեթէ համընկնի 2007 թուականին առաջին հանրահաւաքում հնչեցրած Առաջին նախագահի քաղաքական գնահատականներին: Ներողութիւն խնդրել իր իսկ լեզվատիրութիւնն ապահոված ընտրազանգուածից՝ յեղափոխական գործընթացները լճացնելու համար: Թէեւ ներողութիւն խնդրելու էլի տեղ կայ, բայց այս քանով սահմանափակուենք:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

Յրատարակելով հայաստանեան մամուլին մէջ լոյս տեսնող տարբեր յօդուածներ «ՄԱՍԻՍ» անպայմանօրէն չի բաժնէր հոն արտայայտուող բոլոր միտքերը

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸՎԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸՎԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

չինեանին: Մի բան, որ յեղափոխութիւնից անմիջապէս յետոյ եւ առ այսօր անուամ է նախկին կառավարող համախարգը, այդ թւում Սերժ Սարգսեանի նախկին ու ներկայ կուսակիցները, թիմակիցները, մարդիկ, որոնք ներկայանում են Սերժ Սարգսեանի անուանից, ներկայանում են նրա ընկեր, զինակից կամ որեւէ այլ բան:

Սերժ Սարգսեանը մէկ անգամ գոնէ չորդորե՞լ է նրանցից որեւէ մէկին կամ դադարեցնել այդ ամէնը, կամ դադարեցնել ներկայանալ իր անունից կամ իրեն առնչուող կարգավիճակով: Թէ՞ ամօթ է «հող յանձնելու» համար մեղադրել Սերժ Սարգսեանին, Ռոբերտ Քոչարեանին, իսկ օրինակ Նիկոլ Փաշինեանին մեղադրելն ամօթ չէ:

2019 թուականի Օգոստոսի 5-ին Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում էլոյթի ժամանակ Նիկոլ Փաշինեանը, խօսելով համազգային կոնսենսուսի մասին, առաջարկեց ներքին կեանքում դադարեցնել նաեւ արցախեան հարցում հող յանձնելու վերաբերեալ մեղադրանքները: Համազգային կոնսենսուսի լայն թեմայի առումով կառավարող մեծամասնութեան եւ վարչապետ Փաշինեանի պատասխանատուութեան հարցը բաց է, սակայն «հող յանձնելու» թեմայով ակնառու է, որ կրակի վրայ պարբերական իւր լցնում է նախկին կառավարող համակարգը, ու ինչպէս ակնարկում է Սերժ Սարգսեանը՝ իւր է լցնում առանց ամաչելու:

ՄԱՍԻՍ
ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՏՈՒԹԵՐԹ՝
ՍՈՅՐԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ
ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ
ՎԱՅԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ
MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$100.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ԼՈՒՐԵՐ

Սերկեյ Լաւրով Խօսած Է Տաւուշեան Մարտերու Պատճառներուն Մասին

Տաւուշեան մարտերու պատճառներու մասին Օգոստոս 21-ին, բոլորովին նոր՝ մինչեւ օրս Երեւանի եւ Պաքուի կողմէն չհնչած վարկած առաջ քաշած է ներկայացուցած է Ռուսաստանի արտաքին գործոց նախարարը: «Թրուտ» թերթին տուած հարցազրոյցին ընթացքին Սերկեյ Լաւրով ըսած է, թէ «...իւրատեսակ ձգան դարձաւ աշխարհագրական գործօնը, հայկական կողմի որոշումը՝ վերագործարկելու հին սահմանակէտը, որ ատրպէյճանական արտահանող խողովակաշարերէն 15 քիլոմետր հեռավորութեան վրայ է: Այդ շատերուն մօտ ընդգծուած մտահոգութիւն առաջ բերած է, որուն ուրիշներ չարդարացուած պատասխան տուած են, գործարկելով դիմակայութիւն՝ ամէնէն անկանխատեսելի հետեւանքներով»:

Մոսկուան նաեւ շեշտած է, որ Յուլիսեան բախումներուն նպատակ է շարք մը պատճառներ. - «Առանցքայինը, բնականաբար, այն է, որ հակամարտութիւնը կարգաւորուած չէր, անոր աւելցաւ սահմանի երկու կողմերուն վրայ հանրային տրամադրութիւններու թէժացումը»:

Լաւրով պատմած է, թէ կրակը դադրած է Ռուսաստանի աշխոյժ միջնորդութեամբ, թէեւ՝ «ոչ առաջին փորձէն»: Տրադադարին նախորդած են հեռախօսազանգերը Երեւանի եւ Պաքուի, կազմակերպուած է Ռուսաստան բնակող հայերու եւ ատրպէյճանցիներու հանդի-



Ռուսաստանի արտաքին գործոց նախարար՝ Սերկեյ Լաւրով պոլմ:

«Անոնք պէտք է ամբողջութեամբ գիտակցին Ռուսաստանի օրէնքներուն չհետեւելու պատասխանատուութիւնը», - ըսած է արտաքին գործոց նախարարը՝ ըստ ամենայնի նկատի ունենալով հայերու եւ ատրպէյճանցիներու մոսկուայի բախումները:

Սերկեյ Լաւրով տեղեկացուցած է, որ Ռուսաստանը Մինսքի խումբի իր գործընկերներուն հետ կ'աշխատի զարգացողեան կարգաւորման շուրջ բանակցութիւններու շուտափոյթ վերսկսման ուղղութեամբ:

Պաշտօնական Երեւանը առաջիմ չի մեկնաբաներ Լաւրովի այսօրուայ յայտարարութիւնը: «Ազատութիւնը» դիմած է արտաքին գործոց նախարարութեան:

Ստորագրուած Է Սու-25-ի Արդիականացման Դայ-Ռուսական Պայմանագիր



Կը ստորագրուի Սու-25-ի արդիականացման եւ վերանորոգման հայ-ռուսական պայմանագիրը

ՀՀ պաշտպանութեան նախարարութեան եւ Ռուսաստանի «Միաւորուած աւիաչինարարական (օդանաւի շինարարական) ընկերութեան» միջեւ ստորագրուած է Սու-25-ի արդիականացման եւ վերանորոգման պայմանագիր: Պայմանագիրը կնքուած է «Փաթրիոթ» քոնկրետ-ցուցահանդէսային կեդրոնը՝ «Բանակ-2020» միջազգային ռազմամեքենաներու համաժողովի ծիրէն ներս:

Ինչպէս տեղեկացուցին ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու վարչութեան, փաստաթուղթը

ստորագրած են ՀՀ պաշտպանութեան նախարարի տեղակալ՝ Մակար Ղամպարեանը եւ «Միաւորուած աւիաչինարարական ընկերութիւն» ՀԲԸ գլխաւոր տնօրէնի վաճառքի եւ առեւտուրի գծով տեղակալ՝ Իլեա Թարասենքոն:

«Բանակ-2020»-ի ընթացքին կնքուած պայմանագիրը կը հաստատէ օդային մեքենաներու արդիականացման եւ աւելի վաղ թողարկուած ինքնաթիռներու ամբողջական կենսական շրջանի պահպանման «Միաւորուած աւիաչինարարական ընկերութեան» իրաւասութիւնը:

Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութիւնը Կը Զերքէ, Թէ Ատրպէյճանի Մէջ Գերեվարուած Հայ Սպան Ներթափանցող Է

Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը կը հերքէ, թէ Ատրպէյճանի մէջ գերեվարուած հայ սպան ներթափանցող (տիվերսանթ) է, ինչպէս կը պնդէ ատրպէյճանական կողմը: Նշենք, որ Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան խօսնակը տեղեկացուց, որ Օգոստոս 22-ին՝ ժամը 19:30-ի սահմաններուն, մարտական յենակէտը ստուգելու նպատակով սպայ՝ Գուրգէն Ալավերտեան եղանակային խիստ անբարենպաստ պայմաններու պատճառով շփոթած եւ մոլորած է: Կը կատարուին որոնողական աշխատանքներ:

Թէ շփման ճիշդ որ հատուածին մէջ դէպքը տեղի ունեցած է, Հայաստանի պաշտպանական գերատեսչութիւնը չի մանրամասներ: Մինչդեռ Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը երէկ տարածած յայտարարութեան մէջ կը տեղեկացնէ, որ Օգոստոս 23-ին, առաւօտեան 05.45-ի սահմաններուն, հայկական կողմը ներթափանցման փորձ կատարած է, սակայն կորուստներ կրելով նահանջած է:

Ատրպէյճանական քանի մը կայքեր տեսանիւթ տարածած են, ուր լուսանկարին մէջ երեւցող զինուորական համազգեստով տղամարդը կը ներկայացուի, որպէս հայկական ներթափանցման հետախուզական խումբի ղեկավար: Տեսանիւթին մէջ զինուորականին դէմքը ծածկուած է գլխարկով, իսկ

տեսանիւթին աւարտին արդէն հրապարակուած է լուսանկարը:

Հայաստանի պաշտպանութեան նախարարութեան խօսնակ՝ Շուշան Ստեփանեան մինչդեռ կը պնդէ, որ Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան՝ ներթափանցման մասին տարածած հաղորդագրութիւնը ապատեղեկատուութիւն է. - «Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան տարածած հաղորդագրութիւնն ապատեղեկատուութիւն է, որեւէ ներթափանցման փորձ տեղի չի ունեցել, պարզապէս փորձ է արուում մոլորուածին ներկայացնել որպէս ներթափանցող»:

Նշենք, որ Հայաստանի զինուած ուժերու պատրաստութեան ծրագիրին համաձայն՝ այսօր վաղ առաւօտեան՝ ժամը 05:00-ին, Զինուած ուժերու գլխաւոր շտաբի պետի ղեկավարութեամբ՝ մեկնարկած են Հայաստանի հարաւարեւելեան ուղղութեամբ տեղակայուած զօրամիւտներու եւ զօրամասերու հետ կատարող հրամանատարաշտաբային զօրավարութիւնները: Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը կը տեղեկացնէ, որ զօրավարութիւններուն նպատակը ստուգելն է զօրքերու մարտական պատրաստակամութիւնը, ինչպէս նաեւ խաղարկել հակառակորդի հաւանական յարձակողական եամղման եւ անոր հարուածային խմբաւորումներու ջախջախման օփերատիւ-մարտավարական դրուագները:

Զօրավար Ռուբէն Սանամեանին Շնորհուած Է Ազգային Զերոսի Կոչում



Ազգային Զերոսի Կոչումին արժանացած՝ զօրավար Ռուբէն Սանամեան

Հայաստանի նախագահի Օգոստոս 18-ի հրամանագրով եւ վարչապետի միջնորդութեամբ, զօրավար Ռուբէն Սանամեան պարգևատրուած է Հայրենիքի շքանշանով՝ արժանանալով Հայաստանի Ազգային հերոսի բարձրագոյն կոչումին:

«Զօրավար Սանամեանը, որպէս սպայ եւ հրամանատար, հայրենիքի պաշտպանութեան ու անվտանգութեան ապահովման գործում ցուցաբերել է բացառիկ արիւթիւն, անձնուրացութիւն եւ խիզախութիւն», - ըսուած է նախագահականի հաղորդագրութեան մէջ:


Նախագահի նոյն հրամանագիրով, Պաշտպանութեան նախարարութեան եւս 199 զինծառայողներ պարգևատրուած են Հայաստանի Հանրապետութեան պետա-

կան պարգևներով՝ «հայրենիքի սահմանները պաշտպանելու դրսեւորած անձնուրացութեան, մարտական գործողութիւնների ընթացքում ցուցաբերած խիզախութեան եւ հմտութեան համար»:

Յիշեցնենք, որ անցեալ շաբաթ, վարչապետ Նիկոլ Փաշինեանը տեղեկացուցած էր, որ նախագահ՝ Արմէն Սարգսեանին ուղղած էր միջնորդութիւն մը, տաւուշեան մարտերուն աշխոյժ դերակատարներէն 16 զինծառայողներու «Մարտական խաչ» առաջին աստիճանի, 55 զինծառայողների՝ «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանով պարգևատրելու մասին, իսկ զօրավար՝ Ռուբէն Սանամեանին, Ազգային հերոսի կոչման՝ Հայրենիքի շքանշանով պարգևատրելու մասին:

Շաբթուայ Օրատեսորը Սորոսականները, Պիլլի Կրահանը եւ Թրամփի Ընտանեկան Գաղտնիքները

ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ



Նախագահ **ՏԱՆՈՒՏ ԹՐԱՄՓ**, որ կը ձգտի վերընտրութեան, այս շաբաթ մեծ հարուած ստացաւ Մերակոյտի Հետազոտական Հարցերու Յանձնաժողովին կողմէ: Հանրապետականներու կողմէ ղեկավարուող Յանձնաժողովը հրապարակեց իր վերջնական տեղեկագիրը՝ 2016-ի նախագահական ընտրութիւններուն Ռուսաստանի միջամտութեան վերաբերեալ:

Մօտ 1000 էջերէ բաղկացած տեղեկագիրը կ'արձանագրէ որ, Թրամփի ընտրարշաւի ղեկավար՝ Փոլ Մանիֆորտ կապեր ունեցած է Ռուսաստանի գաղտնի սպասարկութեան անդամներուն հետ, Թրամփի ընտրութեան օժանդակութիւն ստանալու համար:

Տանոյտ Թրամփի, որ մինչեւ օրս կը պնդէր թէ, այդ բոլորը կեղծ լուրեր են եւ խաբէութիւն, լուռ է տեղեկագրի հրապարակումէն ետք:

Նախագահ Թրամփի մեծ քոյրը՝ Մէրիլին Թրամփ-Պէրի, «Ուաշինկթըն Փոսթ» թերթի ձեռք ձգած գաղտնի ձայնագրութեան մը մէջ իր եղբոր մասին կ'ըսէ. «սկզբունք չունի», «ստախօս է», «չեն կրնար վստահիլ անոր», «դաժան է» եւ բազմաթիւ այլ ծանր խօսքեր:



Խօսակցութիւնը արձանագրուած է Թրամփներու եղբոր աղջիկ՝ Մարի Թրամփի կողմէ:

Նախկին դատաւոր Թրամփ-Պէրիի խօսքերուն անդրադառնալով նախագահի պատասխանը եղաւ. «Ամէն օր նոր պատմութիւն: Որո՞ւ հոգն է»:

Աշխարհի ամենէն նշանաւոր քարոզիչ Պիլլի ԿրԱՀԱՄԻ թոռնուհին՝ ձերբուղար Տուֆորտ «USA Today» թերթին մէջ լրջա տեսած յօդուածով մը իր զղջումը կը յայտնէ չորս տարի առաջ իր քուէն Տանոյտ Թրամփին տալուն համար:

Տիկին Տուֆորտի համաձայն Թրամփ կը գործէ Յիսուսի պատգամներուն եւ իր մեծ հօր սկզբունքներուն ճիշդ հակառակ: Ան կ'աւելցնէ, որ մեծ է իր նման հոգեւոր Քրիստոնեայ կանանց թիւը, որոնք նոյնպէս եկած են նոյն եզրակացութեան:



Յուսանք Թրամփի կողմնակից հոգեւոր Հայերը եւս կու գան նոյն եզրակացութեան:

Ազգային Ժողովի փոխնախագահ ԱԼԵՆ ՍԻՄՈՆԵԱՆ, որ կը նկատուի իշխող՝ Քաղաքացիական Պայմանագիր կուսակցութեան ամենէն կարկառուն դէմքերէն մէկը, «Հրապարակ» օրաթերթին տրուած հարցազրոյցին մը մէջ ըսած է. «Սորոսը, իրա հերը կամ որեւիցէ մէկը ում շո՞ւնն են, որ ՀՀ-ում իշխանութեան վրայ ազդեցութիւն ունենան: Հայաստանի վրայ ազդեցութիւն ունի միայն ՀՀ քաղաքա-



ցին»:
Այս յայտարարութեանն չետոյ Բաց Հասարակութեան Հիմնադրամի, որը յայտնի է որպէս «Սորոսի գրասենեակ» ղեկավար Լարիսա Մինասեան դիմած է Աժ նախագահ Արարատ Միրզոյեանին՝ կազմելու Աժ էթիկայի հարցերով ժամանակաւոր յանձնաժողով եւ լուծմանը կատարելու Ալեն Սիմոնեանի յայտարարութիւններուն վերաբերեալ:

Այս բոլորով հանդերձ ընդդիմադիր շրջանակները կը շարունակեն Հայաստանի իշխանութիւններուն անտեղի կերպով մեղադրել «սորոսականութեան» մէջ:

Երեւանի նախկին քաղաքապետ ԳԱԳԻԿ ԲԵԳՂԱՐԵԱՆ դարձաւ նախկին իշխանութիւններու հերթական անդամը, որ կը մեղադրուի քաղաքապետութեան պատկանող տարածքները իւրացնելու մէջ: Դա-

տախազութեան մեղադրանքին համաձայն Բեգլարեան կեղծ գործարքներու միջոցաւ չնչին գումարներով ձեռք ձգած է Երեւանի կեդրոնը գտնուող բազմաթիւ կալ-



ուածներ:
Նախկին քաղաքապետի փաստաբանը կը յայտնէ թէ, իր պաշտպանեալը բուժման համար կը գտնուի արտասահման եւ յայտնի չէ՞ թէ երբ պիտի վերադառնայ Հայաստան:

Հետաքրքիր է, որ նախկին ռեժիմի անդամ բոլոր թալանողները ունին առողջական խնդիրներ, որոնք կրնան միայն բուժուիլ ալ երկիրներու մէջ:



Ութ տարի Հայաստանի նախագահի աթոռը գրաւած ՌՈՊԵՐԹ ՔՈՉԱՐԵԱՆ դատի տուած է Հայաստանի Հանրապետութիւնը՝

իր իրաւունքները խախտուելու համար:

Քոչարեանի փաստաբան Հայկ Ալումեան յայտարարեց, որ բողոքի պատճառն այն է, Մարտի 1-ի գործով դատական նիստին, դատաւոր Աննա Դանիբէկեան դռնբաց դատական նիստի ընթացքին հրապարակած է Քոչարեանի առողջական վիճակի մասին բժշկական գաղտնիք պարունակող տեղեկութիւններ:

Այս բոլորին մէջ ամենէն ծիծաղելիին այն է որ, այս գործը քննող դատաւոր նշանակուած է Արմէնուհի Բաղիրեանը, որ ո'չ աւելի ոչ պակաս՝ փաստաբան Հայկ Ալումեանի կինն է:

Այսպիսին է՝ Հայաստանի դատական համակարգը:

Պելաուսի երկարամեայ ղեկավար՝ ԱԼԵՔՍԱՆԸՐ ԼՈՒԿԱՇԵՆՔՕ, որ նաեւ ծանօթ է որպէս Եւրոպայի վերջին բռնապետը, սկսած է շրջիլ գրահաբաժնիկներով եւ



գնդացիներով՝ իր հակառակորդները վախցնելու յոյսով: Սակայն, նախագահական ընտրութիւններէն երկու շաբաթ ետք տակաւին հարիւր հազարաւոր ցուցարարներ կը շարունակեն պահանջել Լուկաշենքոյի հեռացումը:

Շատեր, Պելաուսի իրադարձութիւնները կը նմանցնեն երկու տարի առաջ Հայաստանի մէջ տեղի ունեցած թաւշեայ չեղափոխութեան եւ կը խորհին որ, ուշ թէ կանուխ Լուկաշենքոյն պիտի հետեւի Սերժ Սարգսեանի օրինակին:

Դասագիրքերու Չափորոշիչներուն Շուրջ

Շարունակուած էջ 1-էն

կարելու դերակատարութեան անտեսումին եւ այլ կուսակցութեան մը գործունէութեան ուռճացումին դէմ: Այս նպատակով երիտասարդները նաեւ ցոյց կազմակերպած էին ԳԱԱ պատմութեան ինստիտուտի տնօրէնի գրասենեակին առջեւ:

Հանդիպումներ ունենալով Կրթութեան նախարարութեան ներկայացուցիչներուն հետ՝ Հնչակեան երիտասարդները փոխանցած էին իրենց մտահոգութիւնները եւ դիտողութիւնները՝ պահանջելով ճշգրտումներ կատարել պատմութեան դասագրքերուն մէջ, որպէսզի պատանի ուսանողները տիրանան աւելի ճշգրիտ գիտելիքներու:

Գաղտնիք չէ որ, ամբողջ քսան տարի Հայաստանի դպրոցները կուսակցականացուած էին, տնօրէնները վերածուած էին ընտրակեղծարարներու, իսկ որոշ «պատմաբաններ» իրենց գիտնականի բարոյական վարկը մէկդի դրած՝ դարձած էին վարձու գրիչներ:

Երկու տարի առաջ Հայաստանի ժողովուրդը ոտքի ելաւ ու երկրէն ցերս իրագործեց յեղափոխութիւն, որ

իր բովանդակութեան մէջ կ'ընդգրկէ փոփոխութիւններ բոլորը այն բնագաւառներուն մէջ, ուր կան նախկին կորունպացուած ռեժիմի մատնափետրեր: Այսօր, երբ յեղափոխական կառավարութիւնը կը կատարէ իրեն տրուած մանտաքը՝ յօգուտ մեր երկրին, ապատեղեկատուութեան արշաւ կը շղթայագերծուի՝ կասեցնելու համար բարեփոխումներու եւ արդիականացման գործընթացը: Անոնց մէջ կ'իյնայ դասագիրքերու հարցը, որոնց միջոցաւ պիտի պատրաստուին ապագայ սերունդները:

Իսկական ապագայիցները անոնք են, որոնք քսան տարի կողոպտեցին երկիրը, աղքատութեան հասցուցին ու արտագաղթի մատնեցին մեր ժողովուրդը, կեղծեցին ընտրութիւնները, անորակ սնունդ տուին բանակի զինուորներուն եւ բազում այլ հակապետական գործեր, որոնց պատճառաւ գրեցին իրենց քաղաքական մահագրը:

Կը յուսանք որ, նոր դասագիրքերու պատրաստութեան գործընթացը կը շարունակուի ու կը հասնի իր աւարտին՝ անտեսելով խառնակիչ տարրերու բարձրացումը աղմուկը: «ՄԱՍԻՍ»

Գալիֆորնիոյ Այս Տարուան Հրդեհները Չորս Անգամ Աւելի Մեծ Քան Նախորդ Տարի



Այս տարուան ամառնային եղանակին եւս բռնկեցան հրդեհները, թէ բլուրներու եւ թէ անտառներու մէջ: Նախ սկսաւ Հարաւային Գալիֆորնիոյ Սան Պէրնանտինո գաւառի շրջակայ բլուրներէն, հասնելով մինչեւ մօտակայ բնակարանները: Այնուհետեւ անակնկալ անտառային հրդեհներ ծագեցան հիւսիսային Գալիֆորնիոյ մէջ, առաւելաբար Սանթա Գրուզի լեռնային շրջանները, հասնելով մինչեւ Սան Հոզէ եւ Պոլլորը: Բազմահազար հրշէջներ տիւ ու գիշերներկայիս կը պայքարին ահարկու հրդեհներու դէմ, որոնք ծագեցան կայծակներու հետեւանքով: Միայն Նաբա Սօնօմ գաւառի հրդեհները իրենց աւերը գործեցին 1217 քառ. քիլոմէթր տարածութեան վրայ: Դաշնակցային պաշտօնեաներ զայն անուանած են «դժոխք» եւ կամ «Յօլոզոսթ»:

Գալիֆորնիոյ կառավարիչ Կէվին Նիւսօմի առաջարկն ընդունուեցաւ Սպիտակ Տան կողմէ աղիտեալ շրջանը յայտարարելու համար նախագահական մեծ աղէտ, որպէսզ սի նահանգն օգտուի հսկայածաւալ հրդեհային օժանդակութիւններէն: Այս առթիւ հակահրդեհային յատուկ օդանաւեր առաքուեցան, նախ փրկելու համար խիստ վտանգաւոր շրջաններու բնակիչները եւ

ապա զսպելու տարածուող հրդեհները: Յարզ հրկիզուած է 5.3 էլքր (արտավար) որ հաւասար է 5.260 քառ. քիլոմէթր հողատարածքի: Իսկ տեղահանուած է 177,000 հոգի: Հրդեհներուն պատճառով ստեղծուած է ապառոջ կենսոլորտ, որուն մաս կը կազմէ Սան Ֆրանսիսքոն եւ շրջապատի օդային տարածքը: Հրդեհները իրած են վեց հոգիներու կեանքը: San Francisco Chronicle թերթին համաձայն շրջանի բանտարկեալները եւս օգնութեան ձեռք երկարած են հրշէջներուն: Նմանաօրինակ օգնութիւն եղած է նաեւ նախորդ տարիներու պարագային: Իսկ այս տարուան Գալիֆորնիոյ հրդեհներուն ծաւալը նախորդ տարիներուն հետ բաղդատելով չորս անգամ աւելի մեծ համարուեցաւ:

Գալիֆորնիոյ տարբեր շրջաններուն մէջ այս պահուն 560 հրդեհներ տեղի կ'ունենան եւ հագարաւոր հրշէջներ գործի վրայ են: Արդարեւ հրդեհներէն երկուքը կը համարուին Գալիֆորնիոյ պատմութեան 7րդ եւ 10րդ մեծագոյն հրդեհները: Յարզ վիրաւորուած են նաեւ 30 հրշէջներ եւ քաղաքայիններ: Արեւելեան ԱՄՆ-էն, Գանատայէն եւ մինչեւ իսկ Աւստրալիայէն օգնութիւն առաջարկուած է:

Հայաստանի Կառավարութեան Օժանդակութիւնը Սուրիահայ Ընտանիքներուն



Ուրբաթ, 21 Օգոստոս 2020-ին, Դամասկոսի Հայոց Թեմի Առաջնորդարանին մէջ՝ Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան կողմէ տրամադրուած նիւթական օժանդակութիւնը բաշխուեցաւ Դամասկոսի ընտանիքներուն:

Դամասկոսի Թեմի Առաջնորդ՝ Տ. Արմաշ Եպս. Նալպանտեանի եւ Սուրբիոյ մէջ ՀՀ դեսպան Տիար Տիգրան Գէորգեանի մասնակցու-

թեամբ՝ Ազգ. Քաղաքական Ժողովի անդամները կատարեցին ընտանիքներուն արձանագրութիւնն ու կատարեցին օժանդակութեան բաշխումը: Այս ծրագիրով Դամասկոս եւ Հոմս քաղաքներուն մէջ մօտաւորապէս 300 հայ ընտանիքներ՝ կտորներու դրութեամբ կարելիութիւն պիտի ստանան պայմանաւորուած խանութներէն գնումներ կատարելու եւ ապահովելու իրենց սնունդի, դեղորայքի, մաք-

Ռուսազգի Տղամարդը Խոյս Տուած Է Թուրքիայէն Եւ ... Անցած Հայաստան



Արմաւիրի մարզի ընդհանուր իրաւասութեան առաջին ատեանի դատարանը՝ նախագահութեամբ դատաւոր Վահէ Խալաթեանի, 7 ամիս ժամկէտով ազատազրկման դատապարտած է այս տարուան փետրուարին հայ-թրքական սահմանն ապօրինի հատած Ռ.Գ. քաղաքացիին: Այս մասին NEWS.am-ը կը տեղեկանայ դատական տեղեկատուական համակարգին մէջ հրապարակուած դատավճիռէն:

«Ռուսաստանի երկաթուղային գիծեր» ՓԲԸ-ի տեսուչ, 56-ամեայ Կէորկի Քապիոքովը 16 փետրուար 2020-ին Թուրքիայէն անցնելով Ախուրեան գետը, առանց պատշաճ թոյլտուութեան հատած է ՀՀ պահպանուող պետական սահմանը, որմէ ետք շարունակելով ճանապարհը ուղեւորուած է սահմանամերձ Բագարան համայնք, ուր յայտնաբերուած է ՀՀ ԱԱԾ աշխատակիցներու կողմէն եւ բերման ենթարկուած: Հայաստանի մէջ Քապիոքովը գտնուած է հիւպատոսական հաշուառման մէջ, եւ ՀՀ տարածքին ստացած է ապաստանի իրաւունք: Ռ.Գ. քաղաքացիին մեղադրանք առաջադրուած է ՀՀ Քրէական օրէնսգիրքի 329 յօդուածի 1-ին մասով՝ առանց պատշաճ թոյլտուութեան ՀՀ պահպանուող պետական սահմանը հատելու համար, եւ անոր նկատմամբ որպէս խափանման միջոց ընտրուած է կալանաւորումը:

Առաջադրուած մեղադրանքին մէջ Քապիոքովն ինքզինք լիովին մեղաւոր ճանչցած է: Իր ցուցմունքին մէջ տղամարդը պատմած է, որ կնոջ հետ հանգստանալու նպատակով, 2020 թուականի 16 յունուարին Ռ.Գ.-էն մեկնած է Թուրքիոյ Անթալիա քաղաք: Օրեր անց ան հիւրանոցին մէջ հանդիպած է քանի մը կանանց, որոնցմէ մէկը մարմնով հպած է իրեն եւ հեռացած, որմէ ետք՝ գիշերը հիւրանոցի սենեակ այցելած են Թուրքիոյ ոստիկանութեան աշխատակիցներ եւ գինք հրաւիրած են մօտակայ բաժին, ուր թարգմանիչի եւ փաստաբանի մասնակցութեամբ կազմած են արձանագրութիւններ: Առաւօտեան իրեն ուղեկցած են դատարան, ուր դատաւորն ըսած է, որ ան կը կասկածուի յանցագործութեան

մէջ, ուստի չի կրնար բացակայիլ Թուրքիայէն: Դատական նիստէն ետք Քապիոքովը վերադարձած է հիւրանոց, զանգած է Թուրքիոյ մէջ Ռուսաստանի Դաշնութեան դեսպանատուն եւ յայտնած է իր հետ կատարուածի մասին, սակայն իրեն պատասխանած են, որ ոչինչով կրնան օգնել: Անկէ ետք ինքը եւ կինը մեկնած են Անթալիա գտնուող մէկ այլ հիւրանոց: 4 Փետրուարին ռուս տղամարդը փաստաբան վարձած է, որ ծանօթանալով քրէական գործի նիւթերուն, առաջարկած է հարաւորութեան պարագային լքել Թուրքիոյ տարածքը, քանի որ իրեն սպառնացած է 8-12 տարի ժամկէտով ազատազրկում:

Թուրքիայէն իրեն դուրս հանելու համար քաղաքացիի մը մասմաս տուած է 16 000 տոլար գումար, որմէ ետք 2020 թուականի 14-16 փետրուարի ժամանակահատուածին մեքենայով իրեն տեղափոխած են հայ-թրքական սահման, որմէ ետք ինքը ինքը ինքուրոյն անցնելով գետը հատած է սահմանը:

Գործի դատաքննութեան ընթացքին ամբաստանեալն իրեն լիովին մեղաւոր ճանչցած է, զոչացած է կատարածի համար եւ դատարանին միջնորդած է արագացուած կարգով դատական քննութիւն իրականացնել, ինչը դատարանը բաւարարած է: Պատիժ նշանակելու ժամանակ, դատարանը Քապիոքովի պատասխանատուութիւնը եւ պատիժը մեղմացնող եւ անձը բնութագրող հանգամանք դիտած է այն, որ ան կը զոչաց կատարածի համար, նախապէս դատապարտուած, կամ այլ կերպ արատաւորուած չէ եղած, ինչն էլ ենթոյնաբար կիւնը եւ երկու չափահաս որդիները:

Դատարանը վճռած է Կէորկի Քապիոքովը մեղաւոր ճանչնալ ՀՀ Քրէական օրէնսգիրքի 329 յօդուածի 1-ին մասով նախատեսուած յանցագործութեան կատարման մէջ եւ այդ յօդուածի պատիժով դատապարտած է ազատազրկման 7 ամիս ժամկէտով, որ նկատի առնուած է փաստացի ձերբակալուած պահէն: Ռ.Գ. քաղաքացիի պատիժի կրման ժամկէտը պիտի աւարտի մէկ ամիսէն եւ ան ազատ պիտի արձակուի:

րութեան եւ այլ անհրաժեշտ պարագաները:

Յառաջիկայ շաբաթ Հոմսի մէջ հայ ընտանիքներ եւս պիտի

ստանան ՀՀ Կառավարութեան օժանդակութիւնը:

Դիւան Ազգ. Առաջնորդարանի Դամասկոս, 21 Օգոստոս 2020

Ձեր Ծանուցումները Կատարեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
 Massis2@earthlink.net 626-797-7680

Սուրբ Աստուածածնի Վերափոխման Տօնը Սիաթըլի Ս. Յարութիւն Եկեղեցում



Հակառակ համաճարակի պատճառով ստեղծուած արգելքներին՝ օգոստոսի 16-ին, հաւատացեալներին՝ չոճ բազմութեան ներկայութեամբ եւ տօնական տրամադրութեամբ նշուեց Ս. Աստուածածնի վերափոխման տօնը: Ներկաները, միանալով եկեղեցու «Նանոր» դպրաց դասին, ձայնակցում էին, երգի եւ հաւատքի զօրութեամբ միաձուլուած եկեղեցուն, իրենց աղօթքները յղում առ Աստուածամայր:

Առաջին անգամ, Սգ պատարագի ընթացքին, հնչեցին կոմիտասեան մի շարք երգեր՝ «Խոր-

պէս, Թ'է բարոյապէս, Թ'է ֆիզիկապէս եղավ իր հայրենակիցների կողքին: Տէր հայրը յոյս չաշունց, որ, ինչպէս անցեալում, այսօր եւս, մեր համայնքը ձեռք կը մեկնի Բէյրութում ապրող մեր եղբայրներին եւ քոյրերին, քանի որ իւրաքանչիւրիս սրբազան պարտքն է աջակցել նրանց:

Ս. պատարագից յետոյ, Ս. Յարութիւն եկեղեցու հովիւ Տէր Վազգէն քհնյ. Բոյաջեանի գլխաւորութեամբ, կատարուեց խաղողորհնութեան կարգ: Խաղողորհնութեան արարողութեան



հուրդ Խորին»ի ծանր տարբերակը, «Բազմութիւնք», «Ամէն եւ ընդ հոգևոյդ Քումբը»-ը, որոնք բացառիկ կերպով մատուցուեցին տաղանդալատ երգչուհի Ելենայ Ասլանեանի կողմից: Նրա աղօթաբոյր ձայնը, թեւածելով ողջ եկեղեցով մէկ, կարծես առաջնորդում էր բոլորին միասնական աղօթքի՝ Աստուծոց հայցելով սէր եւ խաղաղութիւն համայն աշխարհին:

նպատակն է շնորհակալութիւն յայտնել Աստուծուն՝ մեր աշխատանքի երախտալիքը մատուցելով նրան: Օրհնվում է խաղողի ողկոյցը, քանի որ Տէրը խաղողի որթը վեր բարձրացրեց եւ պատուեց՝ իրեն խաղողի որթ անուանելով «ես եմ ճշմարիտ որթատունկը» (Յովհ. 15:1):

Օրվայ խորհրդի մասին իր պատգամում, եկեղեցու հովիւ Տէր Վազգէն Քհնյգ Բոյաջեանը, մեծարելով Մարիամ Աստուածածնի կերպարը, համեմատականներ անցկացրեց նաեւ հայ մայրերի հետ՝ նմանութեան բազում օրինակներ բերելով նրանց միջեւ: Իր քարոզի վերջաւորութեան, Տէր հայրը կրկին կոչ ուղղեց ներկաներին, որ նեցուկ կանգնեն պայթիւնի հետեւանքով նիւթական ծանր կորուստներ կրած լիբանանահայութեանը, որոնք այս դժուարին պահին օգնութեան կարիք ունեն: Նա յիշեցրեց ներկաներին, որ 1988-ից յետոյ, երբ հայ ժողովուրդը ապրում էր երկրաշարժի արհաւիրքը, երբ Ազրբեջանից դէպի Հայաստան էին սասնում հազարաւոր վիրաւոր եւ ունեզրկված զաղթականներ, երբ միեւնոյն ժամանակ տեղի էր ունենում Արցախեան պատերազմը, լիբանանահայութիւնը Թ'է նիւթա-

6 Սեպտեմբերին Աղթամարի Սուրբ Խաչին Մէջ Պատարագ Պիտի Մատուցուի



Վանի տեղական իշխանութիւնները կը պատրաստուին 6 սեպտեմբերին Պոլսոյ հայոց պատրիարքարանի կողմէն Վանայ լիճի Աղթամար կղզիի Ս. Խաչ եկեղեցու մէջ մատուցուելիք պատարագին:

Այս մասին յայտարարած է Վանի նահանգապետ եւ Վան քաղաքի քաղաքապետի պաշտօնակատար Մենմեթ Էմին Պիլմեզը՝ աւելցնելով, որ այս տարի մասնակցութիւնը սահմանափակ պիտի ըլլայ: Պիլմեզը թեմայի վերաբերեալ մասնաւորապէս ըսած է՝ «Աղթամար կղզին եւ Վանայ լիճը աշխարհի մշակութային ժառանգութիւններն են, որոնք ի պահ տրուած են մեզի՝ վանեցիներու: Աղթամար կղզիին վրայ պատմական եկեղեցի կայ: Մշակոյթի ու գրասարքութեան նախարարութեան հետ ստորագրուած արձանագրութեան համաձայն՝ ամէն տարի սեպտեմբերի 2-րդ կիրակի օր եկեղեցու մէջ պատարագ կը մատուցուի: Այս տարի ալ, 6 սեպտեմբերին, այնտեղ համաճարակային կանոններու պահպանումով, աւելի քիչ մասնակցութեամբ պատարագ պիտի մատուցուի: Անոր համար կապ հաստատած ենք պատկան մարմիններու հետ: Մենք ալ մեր բոլոր հնարաւորութիւններով այնտեղ պատարագ կազմակերպողներուն կողքին պիտի ըլլանք: Այս պատարագով կ'օգնենք մեր քաղաքի հանրահռչակման ու գրասարքութեան»:

Կը հաղորդուի, որ ԿգՊոլսոյ հայոց պատրիարքարանէն պատարագը մատուցանելու համար պիտի ժամանէ 25 հոգիէ բաղկացած անձնակազմը:

Յիշեցնենք, որ Աղթամարի Ս.

Խաչ եկեղեցին կառուցուած է 915-921 թուականներուն, Վասպուրականի թագաւոր Գագիկ Արծրունիի հրամանով: Եկեղեցին կառուցած է յայտնի ճարտարապետ, նկարիչ եւ քանդակագործ Մանուէլը (Մոնուէլ): 1113-1895 թուականներուն այնտեղ գործած է Աղթամարի առանձին կաթողիկոսարանը, որու վերացումէն ետք անոր պատկանող վանքերն ու եկեղեցիները անցած են Պոլսոյ հայոց պատրիարքարանին: Կղզին ու եկեղեցին լքուած է 1915 թուականին, Հայոց ցեղասպանութենէն ետք:

Թուրքիոյ մշակոյթի եւ գրասարքութեան նախարարութիւնը 2005 թուականին ձեռնարկած էր Վանի Գեւաշ (պատմ. Ոստան) գաւառի վարչական տարածքին մէջ գտնուող Աղթամար կղզիի Ս. Խաչ եկեղեցու վերականգնման աշխատանքները: Մօտ երկու տարի տեւող վերակառուցման նախագիծին համար շուրջ 4 միլիոն լիւրա ծախսուած է: 2007-ին եկեղեցին այցելուներուն համար բացուած էր, որպէս թանգարան:

95 տարուայ դադարէ ետք, 2010 թուականէն ի վեր, ամէն տարուայ սեպտեմբերին՝ Խաչվերացի տօնին յաջորդող կիրակի օրը, Սուրբ Խաչ եկեղեցու մէջ պատարագ կը մատուցուի: Սակայն 2015-2017 թուականներու ընթացքին, շրջանի քիւրտ զինեալներու եւ թրքական զինուժի միջեւ պարբերական բախումներու հետեւանքով պատկան մարմինները պատարագ մատուցանել չեն արտօնած: Եռամեայ դադարէ ետք 2018-ին եկեղեցու մէջ կրկին պատարագ տեղի ունեցաւ:

Լուրը՝ Էրմէնիհայէրէն



URGENT APPEAL

We stand in solidarity with our community in Beirut, Lebanon. The consequences of the tragic explosion on August 4 are horrific. Nothing can bring back precious lives lost. Nor is it easy to restore homes, churches, community centers and businesses damaged. But we can lend a helping hand to our brothers and sisters at the AEBU - Lebanon who are doing the impossible to help the wounded and the displaced following this disaster.

TOGETHER
let's try to ease the pain and
RESTORE HOPE!

CLICK HERE AND DONATE



Յեղափոխութեան Քննարկումը եւ Լիբանանեան Տագնապը - Բ

Ծ.Խ. Օգոստոս4-ին Պէյրութի ահաւոր պայթուումը եւ Լիբանանի ապագային մասին հարցադրումներու հեղեղը, առիթը հանդիսացան մեր արխիւին մէջէն դուրս հանելու 44 տարիներ առաջ մեր գրած մէկ յօդուածաշարքը, խորագրուած՝ «Յեղափոխութեան քննարկումը եւ Լիբանանեան Տագնապը», որ յաջորդական 6 թիւերով լոյս տեսած էր Պէյրութի «Արարատ» օրաթերթին մէջ, 1976-ի Փետրուար-Մարտ ամիսներուն: Յօդուածաշարքի վերջին թիւով մենք կը ներկայացնէինք մեր խորհրդածութիւնները, որ ի՞նչ հիմքերու վրայ կարելի պիտի ըլլայ կառուցել ապագայ Լիբանանը: «Մասիս»ի այս եւ յաջորդական թիւերով պիտի վերատպենք այդ յօդուածաշարքը, որմէ ետք պիտի տանք մեր ներկայի խորհրդածութիւնները:

ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ՂԱԻԹԵԱՆ

Այս երկու կարծիքները ծայրայեղ նկատուած են ու գոյութիւն առած է երրորդ կողմ մը որ կ'ըսէ թէ յեղափոխութիւնները կ'աճին փոփոխութիւն պահանջող մարդոց ցանած տունկերէն եւ սակայն այս մարդիկը չեն գործեր բնութեան դէմ, ուստի եւ յեղափոխութիւնը մարդուն եւ բնութեան արդիւնքն է: Խօսինք օրինակներով: Երբ Ֆրանսա-սացի խուժանը Յուլիս 14, 1789ին գրաւեց Պասթիլի բանտը, արդեօք կրնար գուշակել, թէ այս արարքով պայթեցուցած էր աշխարհի մեծագոյն յեղափոխութիւններէն մէկը: Եւ կամ երբ Միքայէլ ձարը Մարտ 16, 1917ին հրաժարեցաւ իր խախուտ գահէն, արդեօք կրնար գուշակել որ իր այս արարքով առած

զաղափարները: Վերծինիոյ ըսած է. «Յեղափոխութիւնը, Սաղիւրնի նման, կը գիշատէ իր գաւակները»: Իրապէս ալ, երկար չի տեւեր ու ահա անհասկացողութիւններ կը ծագին յեղափոխականներու չափաւորին ու ծայրայեղին միջեւ, ու կը սկսի մրցակցութիւն մը, որ ընդհանրապէս կը վերջանայ ծայրայեղին յաղթանակով: Քերենաքիի, Նէկիպի եւ Սքենոլայի օրինակները այս կը փաստեն: Հոս կ'արժէ հարց տալ թէ ինչու համար ծայրայեղականներն են որ կ'իշխեն յեղափոխութեան վրայ: Պատասխանը հետեւեալն է. յեղափոխութեան ժամանակ ամբողջ ժողովուրդը կը գտնուի այնպիսի իւրաքանչիւր վիճակի մէջ, ուր խաղաղ ու միջին անձը տեղ չունի: Ուրեմն ծայրայեղն է որ կ'իշխէ որովհետեւ ան



եղաւ առաջին քայլը այն ճամբորդութեան, որ պիտի յանգէր գերպետութեան մը՝ (ՍՍՀՄ) ստեղծումին: Եւ կամ երբ 1765ին Անգլիական Խորհրդարանը իր հիւսիսային Ամերիկայի գաղութներուն վրայ ուզեց «Դրոշմաթուղթի Որոշումը» պարտադրել, արդեօք կրնար կռահել, թէ այս որոշումը տեղացիները պիտի մղէր անկախութեան պայքարի մը, որ պիտի վերջանար անոնց Անգլիայէն անջատումով եւ ուրիշ գեր տէրութեան մը (ԱՄՆ) հիմնումով: Ուրեմն, կրնայ ըլլալ որ կարգ մը մարդիկ ծրագրեն յեղափոխութիւն մը եւ սակայն անոնք կարողութիւնը չունին մեզի յատակօրէն տեղեկացնելու թէ ուր պիտի յանգի այդ յեղափոխութիւնը: Ոչ անցեալի քաղաքագէտները եւ ոչ ալ ներկայի «քոմբիւթըները» կրնան այս մէկը գուշակել: Կիպրոսի 1973ի Պետական հարուածը ինքնին պերճախօս օրինակ մըն է:

Հայրենադարձութեան բոլոր քարոզները, կոչերը, հրաւերները փուճ են, երբ հայրենադարձողներու մնալու հնարաւորութիւններն ու միջոցները սակաւ են կամ հայրենադարձներով զբաղելու քու միջոցները անբաւարար են: Ոչ միայն նորեկները կը վերադառնան, բնիկներն ալ կը հեռանան: Հացի խնդիր է: Արդէն մոռցանք Դից Մաչրի անունով մկրտուած ու երբեք չապրած գիւղի մը պատմութիւնը: Արդէն մոռցանք, որ Դէպի Երկիր նշանախօսք մը կար: Մարդիկ հայրենիքի մէջ աղքատ մնալ ու բեռ ըլլալ չուզեցին, անկախ անկէ, որ այդ բեռը շալկող ալ չկար: «Ինտեգրման» եւ «ադապտացիայի» քու մեկնութիւններդ սանդի մէջ ջուր ծեծել է, պարապ տակաւ աղմուկ: Մարդու արժանապատուօրէն ապրելու իրաւունքը մարդու ամենասուրբ արժանապատուութիւնն է: Ինչ կրնային ընել, երբ այստեղ չկրցան երկու ոտքի վրայ մնալ: Դուք ամէն նախկին ուսուցիչէ, պաշտօնեայէ, արհեստաւորէ, այս կամ այն մասնագիտութեան տէր մարդէ ու գործարարէ չէք կրնար ակնկալել, որ անպայման հոս յաջողի կամ կեանքի ընթացքը փոխէ՝ ասպարէզը, գործը, արհեստը...: Գիտեմ, թէ ոմանք ինչպէս դուռէ դուռ կ'իջնային գործ մը հայթայթելու համար, թերեւս ալ երկու կամ երեք տեղ նոյնիսկ վազելու տրամադրութեամբ, որպէսզի այստեղ գոյատեւելու չափ միջոց ունենային...: Տարի մը, երկու դիմացան, թերեւս աւելի, շատեր կը շարունակեն մնալու եւ չհեռանալու կիրքով սեղմուել...: Յետո՞յ...

Գացին: Լաւ ըրին: Որովհետեւ նախ՝ տարտղնուած ու ցրուած ընտանիքները հիւրընկալ երկիրներու մէջ մէկտեղուեցան, գործ, տուն-տեղ ունենալու արագ միջոցներ հայթայթեցին կամ իրենց տրամադրութեամբ: Սկսան ապրիլ: Շունչ քաշեցին այս երկար ու լկիւն ողիսականներէն ետք: Ինչ գէշ բան

կայ ասոր մէջ: Խնդրեմ, հին ու նոր ընտանիքները համայնքային շրջագիծին մէջ ամբողջացան, իրարմով թարմացան, զօրացան, եկեղեցիով, ակումբով, միութիւններով, հայկական դպրոցներով պայմանաւորուած՝ պահպանեցին ու կը շարունակեն պահպանել մշակութային ժառանգութեան յարատեւութիւնը, բան մը որ հայրենիքի մէջ «ինտեգրման» եւ «աստապտացիայի» գլաններու տակ առհասարակ նիւթ ալ չդարձաւ...: Ատիկա ուրիշ ցաւ է:

Ակամայ կը լիչեմ մեծն Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վէպին շահանջել փորձող վերջին հերոսը՝ «Լոխումը», որ տեսնելով Փարիզի ուժացման ու այլասերման պայմանները՝ կ'ուզէ Հայաստան ներգաղթել: «Ռուսական դեսպանատուն է գացեր Լո-

խում, պահանջելով, որ Հայաստան երթալու համար իրեն անցագիր տան: Մերժեց են: Ըսեր է, թէ կ'ուզէ իր հայրենիքը ապրիլ. մերժեց են: Ըսեր է, թէ կ'ուզէ ճահիճներու չորացումին եւ ջրանցքներու բացումին համար իր բազուկները տանիլ. մերժեց են: Ըսեր է նոյնիսկ, թէ կ'ուզէ Արարատը տեսնել ու շնչել գայն. նորէն մերժեց են»:


Լոխում այս անգամ դիմեր է սարափելիօրէն անհաւանականին, բայց մարդկայնօրէն ամենէն տրամաբանականին, վերադառնալ իր արմատներուն: «Այս անգամ վազեր է թրքական հիւպատոսարան: Մահիկաւոր դրօշը, անոնց գիրերը եւ թուրք գլուխները տեսնելով բոլորովին կատղեր է. պահանջեր է, որ անմիջապէս, անմիջապէս անցագիր տան իրեն... թէ մայրը մահամերձ է, պիտի մեռնի, թէ ինքն ալ հիւանդ է, ջղային նոպաներ ունի, թէ պէտք չէ, որ իր ապագան խորտակեն. իր տեղը հոս «Փաբրիկա»ներուն մէջը չէ, թէ պէտք չէ, որ... Սկսեր է հայհոյել, ունալ, անիծել: Մտիպուեր են քանի մը հոգի մէկէն վրան իջնալ գինքը դուրս կարենալ նետելու համար»:

Այո՛, Լոխումը պիտի հարցնէ. «Ո՞վ եմ ես, ի՞նչ եմ, ո՞ր պետու-

թիւնը պիտի զբաղի ինձմով, մեզմով»:

Հիմա համաշխարհայնացումի մեր օրերուն՝ հայր աւելի աշխարհաքաղաքացի է, քան 20-ական թուականներուն, այսինքն այդ տաղանայները հիմա նոյն ծանրութեամբ չեն ընկերանար անոր. օտար երկիր, օտար մշակութային միջավայր, օտար լեզու եւ բազում այլ օտարոտի երեւոյթներ հայ մարդը կը դիտէ հաշտ կերպով, կը դարձնէ ճամբու ընկեր, առանց իր ինքնութեան հրաժարելու: Բոլորին մէջ մէկ մագնիսական դաշտ կայ՝ ՀԱՅՐԵՆԻՔԸ, անով կ'ապրի, անոր համար կ'աշխատի, անոր վերելքին համար իր կարելին կ'ընէ: Հայրենիքին ոչ ոք թիկունք դարձուցած է, պայմանով որ շարունակէ վստահիլ ու կառչած մնալ իր եկեղեցական, կրթական եւ միութենական կառույցներուն, որպէսզի դիմանալ կարողանայ:




Ձի բաւեր ունենալ հայրենիք, որուն տէրը օտար է, չի բաւեր ունենալ սեփական պետութիւն, որ անգոր է, ատոր համար ալ գացողներուն եւ մնացողներուն մեծագոյն ճիգը հայրենիքի պետականութեան հզօրացումն է կամ պէտք է ըլլայ: Առանց հզօր հայրենիքի՝ չի կրնար հայրենադարձութիւն ըլլալ:



THE TIME TO GIVE BLOOD IS NOW

STEP UP! GIVE LIFE...
CELEBRATE ARMENIA'S INDEPENDENCE
SAVE A LIFE. GIVE BLOOD!

Sponsored by
Armenian Educational Benovolent Union
Armenian Council of America
Gaidz Youth Organization

Conducted by
American Red Cross

AEBU Center
1060 N Allen Ave, Pasadena, CA 91104

SUNDAY, SEPTEMBER 20, 2020
12:00 PM – 6:00 PM

Schedule your Appointment
Visit www.redcrossblood.org and enter sponsor code **AEBU**

For more information:
ACA @ 818.660.5142

S.S. Սահակ Բ Խապայեան Կաթողիկոսին Վերջին Այցն Ու Կիլիկիոյ Դժբախտ Ծակատագիրը 1920-1921

Միսի պատմական Աթոռին վերջին Գահակալը եղաւ: Իր կեանքն ու երկարատեւ գահակալութիւնը վերջալոյս չբերին իր ալեհեր կեանքին: Ընդհակառակը, արշալոյս մը բացին իր տոկուն կենցաղին եւ անխախտ հաւատքին շնորհիւ: Սահակ Կաթողիկոս տեսաւ վերընծիւղունը իր Աթոռին՝ իր ձեռքով, եւ ո՛չ թէ օտարին աջակցութեամբ:

ԴՈԿՏ. ՋՈԻԷՆ Ա. ՔՅՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Վերջին Յոյսն ու Հրաժեշտը

Ուղիղ դար մը առաջ Երջանկայիշատակ S.S. Սահակ Բ Կիլիկիոյ Կաթողիկոսը 1920 թուին աքսորէն Կիլիկիա վերադարձաւ այն յոյսով որ պիտի վերակերտէր իր Աթոռը՝ քաջալերուած Միհրան Տամատեանի քաղաքական դիրքէն: Լման տարի մը մնաց Ատանա, 1920 Նոյեմբերէն 1921 Դեկտեմբեր, եւ ապա անդարձ մեկնեցաւ Կիլիկիայէն, միշտ մնալով իր ժողովուրդին գլուխը երբ արդէն 72 տարիքը լրացուցած էր: Կաթողիկոսը իր վերջին հրաժեշտը տալով Կիլիկիոյ, գահակալութեան փորձանքներով լի ահաւոր իր ընթացքը շարունակել անվհատ՝ քաղաքական երկու յաջորդական հոսանքներու ընդմէջէն՝ Արեւմտեան Հայաստանէն դէպի Արեւելեան Հայաստան: Թուրքիոյ ծանօթ ոճիրը, որ այսօր համատարած ճանաչում գտած է արդէն որպէս բարձրաձայն պարսաւանք թուրք պետական դեկավարութեան դէմ, սկիզբ առաւ թրքական հողին վրայ, սպանդով եւ աքսորով, քանդելով հայուն տունն ու մշակոյթը, եկեղեցին ու համայն հայութիւնը, անցնելով սահմանէն անդին եւ Արեւելեան Հայաստանն ալ նոյն ճակատագրին մատնել փորձելով: Սարգարապաւոր ճակատամարտը սակայն ետ շարտեց թուրք բանակը խիզախ հայորդիներու վճռական դիմադրութեամբ՝ հռչակելով Հայաստանի Հանրապետութիւնը 1918 Մայիս 28-ին: Նոյնը չեղաւ սակայն թրքահայոց պարագային:

Երկու հոգեւոր պետերն ալ, S.S. Գէորգ Ե Սուրբնեան եւ S. S. Սահակ Բ Խապայեան Կաթողիկոսները, ամենէն վճռական պահուն նոյնիսկ մնացին ամուր եւ պահեցին հայուն մնացորդաց բեկորները: Ամենայն Հայոց Հայրապետը մնաց իր Աթոռին վրայ աներեր, հակառակ թշնամիին դէպի էջմիածին ու Երեւան ձախող ներխուժումին, իսկ Կիլիկիոյ Կաթողիկոսը թուրքին եւ Եւրոպայի պետութեանց քմայքին ներքեւ թափառեցաւ անտուն եւ անօթեան, ու անդարձ մեկնեցաւ բնակութիւն գտնելու Հայկազ, իր կարեւոր թեմերէն մէկուն մէջ, ուր մեծ թիւով վտարանդի Կիլիկեցիք հասած էին:

Հայութենէ պարպուած էին Սիսը, Ատանան ու Այնթապը, Մարաշն ու Զէյթունը: Վերապրողներն եղած էին գաղթական, անտէր եւ անտուն՝ ցրուած Պաղեստին, Սիւրիա, Լիբանան եւ Յունաստան, լքուած իրենց բախտին, իրենց ձեռքերով կերտելու համար իրենց տունը, մինչ անվհատ ու քաջարթուն Սահակ Բ Խապայեան Կաթողիկոսը իր դիմացկուն եւ աննահանջ ուժերով պիտի վերակերտէր իր Աթոռը Լիբանանի մէջ:

Նախընթացը

Կիլիկիոյ տարաբախտ պարպումին նախընթացը եւ պատճառը Եւրոպական դաւաճանող քաղաքականութիւնն էր: Առաջին Համաշխարհային Պատերազմի ժամանակ



Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ 1916 Մայիս 16-ին գաղտնի համաձայնութիւն մը կնքուեցաւ Օսմանեան Թուրքիոյ որոշ տիրոջութեան բաժնելու մասին, եւ այդ համաձայնագիրը ընդունուեցաւ Ռուսիոյ Կայսեր կողմէ եւ ստորագրուեցաւ Լոնտոնի մէջ:

Ըստ տուեալ պայմաններուն Ֆրանսայի պիտի յանձնուէր Կիլիկիան, նկատի ունենալով անոր ռազմավարական կարեւոր դիրքը: Հայկական Լէզդոնը գտաւ իր հովանաւորը՝ Ֆրանսան, որուն հետ հայեր պիտի կուռէին թուրքերուն դէմ եւ յաղթութեան պարագային Կիլիկիա ինքնավար պիտի դառնար եւ տրուէր հայերուն: Ըստ այնմ, Հայկական Լէզդոնը 1918 Սեպտ. 19-ին Արարայի ճակատամարտին մասնակցեցաւ Պաղեստինի մէջ ու Ֆրանսա յաղթական դուրս եկաւ անուններով յայտնի քսաներեք հայ հերոսներ նահատակ տալով:

Առաջին նշանները լաւ էին եւ սակայն շատ կարճատեւ: Ֆրանսա արտօնեց հայկական գունդին մուտքը Կիլիկիա շուրջ 6000 զինեալներով, որոնք ցամաք ելան Ալեքսանդրէթ, եւ Մերսինէն մտան Կիլիկիա: 1919-ին արդէն մօտ 120,000 հայեր կ'ապրէին Կիլիկիոյ մէջ, իսկ տարի մը ետք թիւը բարձրացած էր 160,000-ի: Սակայն Ֆրանսական հոգատարութիւնը լուրջ եւ մնացուն միջոցներ ձեռք չառաւ հայերու անվտանգութիւնը ապահովող: Ֆրանսայի հաւանութեամբ նոյնիսկ տեղ տեղ թուրք պաշտօնատարներ սկսան իշխանութեան գլուխ անցնել, մինչ անդին միեւնոյն ատեն Քեմալական շարժումը կը սողոսկէր Կիլիկիայէն ետք Իզմիրի եւ Յունական ծովերուն տիրանալու վճռականութեամբ: Սակայն անոնց համար Կիլիկիան նախ եւ առաջ կուգար:

Կիլիկիոյ Ինքնապաշտպանութիւնը

Հայեր իսկոյն ինքնապաշտպանութեան խիզախ փորձերու ձեռնամուխ եղան որոնք սակայն շուտով թուրքերուն ձեռքը ինկան՝ ջարդի եւ կոտորածի մատնուելով: Այսպէս, 1920-ին Մարաշ դիմադրեց 20 օրեր եւ կորսնցուց 11,000 հայորդիներ: Մնացած 8,000-ը գաղթեց Սուրիա: Հաճոյն պաշարուեցաւ 7 ամիս եւ հերոսաբար դիմադրեց թշնամիին, եւ սակայն 1920 Հոկտեմբեր 15-ին յանձնուեցաւ անոր:

Հաճոյ բազմաթիւ հայութեան միայն 380 զինուորներ կրցան ճեղքել թշնամիին բանակը եւ ազատիլ: Ո՞ւր էին Ֆրանսացիք: Ինչի՞՞ ծառայեց անոնց Հայ Լեզդոնականներուն հետ իրենց կնքած դաշինքն ու համաձայնութիւնը Արարայի կուռին ընթացքին: Անպատիւ քաղաքականութեան, սուտի եւ կեղծիքի գործ գացին հայորդիք:

Մուսթաֆա Քեմալ 1920-ի Ապրիլ 1-ին պաշարեց Այնթապը, եւ 15 օրուան հերոսական ինքնապաշտպանութենէ ետք 18,000 այնթապցի հայեր փրկուեցան կոտորածէ ու գաղթեցին Հայկազ: 1919-ին Զէյթուն վերադարձած էին 1058 տարագիր հայեր որոնք դժբախտ վախճան մը ունեցան, եւ այս ձեւով Կիլիկիոյ հայութիւնը անգամ մը եւս գործնաց միջազգային քաղաքականութեան, խաբուելով Ֆրանսային եւ Անգլիային, որոնք աւելի պէտք ունէին թուրքին քան թէ հայուն: Աւելին եւ դատապարտելին եղաւ այն որ Ֆրանսա ո՛չ միայն դրժեց իր կնքած դաշինքը, այլեւ 1921 Հոկտեմբեր 20-ին Անգարայի դաշնագրով Կիլիկիան յանձնեց թուրքիոյ:

Սահակ Բ Կաթողիկոսի Վերջին Ծիզը

Նոյն այդ տարիներուն Սահակ Բ Խապայեան Կաթողիկոս կը ջանար Ատանա իր հօտին գլուխը մնալ, ուրկէ կը վարէր իր թեմական գործերը իր կողքին ունենալով Եղիշէ Կարոյեան եւ Պետրոս Սարաճեան եպիսկոպոսները, յուսալով որ հոն պիտի մնար ու հաստատուէր: Սակայն վերոյիշեալ արագընթաց եւ դաւաճան դէպքերը խորապէս յուսալքեցին ծերունի Հայրապետը, որ կրկին կը ստիպուէր թողուլ Կիլիկիան եւ դիւանա-

գիտական այցի երթալ Փարիզ՝ 1920 Մարտ 13-ին, տեսակցելու Ֆրանսայի նախագահին ու վարչապետին հետ:

Կաթողիկոսը ձեռնունայն փարիզէն Պէյրութ մեկնեցաւ, ուր Ֆրանսայի Բարձր Քոմիսերին հետ բանակցեցաւ ու ապա վերադարձաւ Ատանա Նոյեմբերի 1-ին՝ ու թամիս բացակայէլէ ետք: Զինք կը փոխարինէր Եղիշէ Եպիսկոպոս Կարոյեան որպէս թեմի առաջնորդը: Սահակ Կաթողիկոս եւ եպիսկոպոսներ Ատանա մնացին լման տարի մը եւս եւ Կիլիկիոյ վերջնական պարպումը տեսնելով իրենք եւս իրենց հօտին հետ գաղթեցին Հայկազ 1921 Դեկտեմբերին: Այս անգամ վերջնականապէս:


Ականատեսի մը Յուշերն

Հայրս Եղիա Արզումանեան իր մօր եւ երկու քոյրերուն հետ էվէրէկէն բռնի գաղթական ելան դէպի Կիլիկիա ուր մնացին նոյն այն տարին երբ Կիլիկեցիք յուսալից վերադարձան Ատանա: Հոն հայրս, ինչպէս պատմած է մեզի, կը յուսար իրենց բնակութիւնը հաստատել, մինչեւ իսկ «Ատանայի մէջ դերձակի խանութիւն ալ բացի այդ մէկ տարուան ընթացքին» ըսելով: Քսանամեայ հայրս կը լիչէր Միհրան Տամատեանն ու Ռամկավար Ազատական ազգայնոց ուղիղ վերաբերմունքը նորեկներուն կատմամբ ու կ'անդամակցէր կուսակցութեան մեզի ցոյց տալով փոքրիկ վկայագիրը՝ ստորագրուած Լեւոն Աճեմեանի կողմէ որ յետագային եղաւ նաեւ մեր Հայոց Պատմութեան ուսուցիչը Գահիրէի Գալուստեան Ազգային Վարժարանին մէջ: Անդամատետրը կը մնայ

Շար.ը էջ 19

VA Print Media


Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles



Հետաքրքրուած ենք իրենց փոխարժեքով ստանալ՝

- Հայկական երգարաններ
- Կիլիկիոյ պատմական գիրքեր
- Յեղասպանութեան հետ առընչուած գիրքեր

Եթէ ունիք եման գիրքեր եւ կը վաճառելու գտնուէք վաճառել, կը խնդրենք մեզի հետ կապ հաստատել Հեռաձայնելով՝ ՎԱՀԵ ԱՋԱՊԱՀԵԱՆԻՆ:



Նոր Գիրքերու
Տպագրութեան
եւ Հին Գիրքերու
Նորոգութեան

Vahe Atchabahian
2004 E. Washington Blvd. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

Նոր Թռիչք Նոր Վիճակ



ԴՈԿՏ. ԳՐԱՅՐ ԵՊԵՏԵԱՆ

Արդեն եղաւ մօտաւորապէս վեց ամիս որ չեմ ճարտորդած: Այս իմ վերջին երեսուն տարիներու հեւքոտ կեանքին համար իւրապատուկ է: Այս վեց ամիսներու ընթացքին, որուն խոշոր տոկոսը անցաւ մեկուսացման վիճակի մէջ, կեանքի ընթացքը եւ գործունէութիւններու ոճը փոխուեցան:

Քուէյթ որդեգրած է հանգրուանային ձեւով երկիրը տակաւ առ տակաւ բանալու: Հիմա արդէն մտանք չորրորդ հանգրուանը, ուր նաեւ վերաբացուեցաւ օդակայանը: Ասոր վրայ եկաւ աւելնալու Քուէյթի կառավարութեան մէկ յստակ եւ երեւի նոյնքան խիստ միջոցառումը՝ երեսուն երկիրներէ վերադարձողներու մուտքը Քուէյթ արգելուեցաւ: Եւ այդ երեսուն երկիրներու շարքին է նաեւ Լիբանանը: Ստիպուած էի գէթ Կիպրոս ճամբորդել, որպէսզի կարենամ որոշ գործեր հետապնդեմ, որովհետեւ ամէն ինչ առցանց կարելի չէր ընել:

Հինգշաբթի, օգոստոս 20ին մտայ Քուէյթի օդակայանը: Եթէ օդակայանի կառուցը նոյնն էր բաց կային նաեւ պակասաւոր կողմեր: Իսկ պակասաւորը՝ ճամբորդութեան աշխուժութիւնը եւ անոր ստեղծած հոգին: Իրականութիւն մը, որ կը զգաս ու կը վայելես երբ յաճախ կը ճամբորդես: Օդակայանը դատարկ էր: Առաջին անգամ ըլլալով կը մտնէի ներս եւ երես ծածկուած: Ամէն կողմ կային յատուկ ուղեցոյցեր թէ ինչպէս ճամբորդել պիտի յանձնեց ու տակաւին անձագիրդ ստուգման ներկայացնել: Իսկ սպասման սրահին ոչ բոլոր աթոռներու վրայ կարելի էր նստիլ: «Երկու մեթր հեռաւորութիւն ձգէ» դարձած է այսօրուայ կարգախօսը: Ո՞վ եւ ո՞րմէ պէտք է հեռաւորութիւն ձգել: Մարդը մարդէն:

Սկսայ զգալ բաց նաեւ ապրիլ թէ նոր թռիչքի հասկացողութեան եւ կենցաղի մը մէջ մտած եմ եւ բոլորս՝ անխտիր: Բաց այդ երեւի պիտի ըլլար միայն նախանշանը յաջորդական այլ նոր ապահովական նախաձեռնութիւններու: Օդանաւին մէջ եթէ մէկ կողմէ ծածկած էի բերանս եւ գիթս, բաց նաեւ գլխուս վրայն անցուցած պաստաւրի նման ապահովական այլ միջոցառում մը, որպէսզի ամբողջ դէմքը եւ գլուխը պահես դիմացինէն: Իսկ դիմացինը: Մարդն է, ծանօթ կամ ոչ, որ մօտը նստած է եւ քեզի հետ է այս ճամբորդութեան ընթացքին:

Կար աւելին: Բաժնուեցան յատուկ ձեռնոցներ եւ խնդրուեցաւ որ նաեւ մեր ձեռքերը ծածկենք: Եւ

ձեռքերն ալ ծածկելով արդէն հագած եղայ համավարակի դէմ դնելու ամբողջական սպարազէնքը՝ պատրաստ պատերազմի:

Այս մէկը երեսուն եւ աւելի երկար տարիներու թռիչքներէն շատ տարբեր էր: Այս չէր իմ վարժուածը ու փորձառութիւնը: Ծնչառութեան նեղութիւն սկսայ ունենալ ու տաքութիւն մը խուժեց դէմքիս վրայ: Սկսայ տատամսիլ թէ հնարաւոր է՞ որ արդէն պսակածեւ ժահրով վարակուեցայ:

Ունէի մէկ միթարութիւն: Բարեբախտաբար թռիչքը շատ երկար չէ: Սկսայ ինքզինքս քաջալերել թէ ինչ լաւ է որ Ամերիկայ կամ այլ հեռաւոր տեղ մը չեմ ճամբորդեր:

Լաւնաքայի օդակայանը եթէ նոյնն էր բաց նոյնքան փոխուած էին ստուգման միջոցառումները: Պէտք էր սպասելինք երկար շարքի մը մէջ, որպէսզի ստուգեն թէ ժահրէն գերց յատուկ վկայագիր ունիս թէ ոչ: Ունէի եւ այդ ալ գերց: Բաց այդ մէկը երբեք չօգնեց: «Տասնըհինգ օր պէտք է մեկուսացնես ինքզինքդ» եղաւ ստուգող ոստիկանին վճիռը:

Կիպրոսի ոստիկանին ըսածը նորութիւն չէր ինծի համար: Բաց չէ որ արդէն ամիսներէ ի վեր մեկուսացման վիճակի մէջ էինք Քուէյթի մէջ: Այս անգամ ալ պիտի փորձէի Կիպրոսի մեկուսացումը:

Հիմա Կիպրոս տունը նստած՝ կ'աշխատիմ, կը գրեմ եւ կը մտածեմ: Նոր թռիչք: Նոր վիճակ: Եթէ այս պիտի ըլլայ մեր կեանքը եւ անոր ապրելու ոճը՝ կ'ուզե՞նք, պիտի յառմարուի՞նք:

Լիբանանի լուռերուն կը հետեւիմ: Բաց նաեւ մնացուն կապի մէջ եմ բարեկամներու հետ: Եթէ աշխարհագրականօրէն արգիլեցին ինծի վերադառնալու տուն, չեն կրնար միտքս, սիրտս ու հոգիս կապուածութիւնը արգիլել: Լիբանանի վիճակը դժուար է: Քաղաքական անորոշութիւն եւ ընկերային ու տնտեսական ահաւոր դժբախտութիւն: Եթէ մէկ կը զարմանամ բաց շատ աւելի կը բարկանամ, թէ մեր երկրի քաղաքական դեկավարութիւնը չզգաստանար եւ չուզեր անդրադառնալ ահաւոր աղէտէն դուրս գալու ելքեր որոնելու մասին: Ու տակաւին անհամաձայնութիւնը վերածուած է կեանքի ոճի եւ ուղղութեան երբ բոլորն ալ որոշած են չի համաձայնիլ: Բաց հապա ժողովուրդը ու անոնց գրկանքները: Հարազատներ կորսնցուցած իւրաքանչիւր ընտանիք: Տուն, կալուած ու անտէր մնացած մարդիկ:

Լիբանանցի ծանօթ դերասան

եւ արուեստագէտ Ջիատ Ռահպանի հետաքրքրական եւ սրամիտ դիպուկ ակնարկ մը ըրած էր դիմատետրի իր էջին վրայ. «Լիբանանցին շատ սուրճ կը խմէ: Կ'ակնկալուի իրմէ որ շատ աւելի արթուն եւ զգաստ ըլլայ»:

Բաց ո՞ւր է արթնութիւնը եւ ո՞ւր է զգաստութիւնը:

Հալէպէն եկած լուռերը նոյնքան տխուր են: Համավարակը տարածուած է քիչ մը ամէն տեղ: Շատ են վարակուողները ու տակաւին մահերը: Իւրաքանչիւր օր նոր տխուր լուռ մը կը ստանանք Հալէպի հայ գաղութէն վարակուողներու եւ մահացածներուն մասին: Եթէ անձանօթներ բաց նաեւ լաւ բարեկամներ կան մահացողներուն շարքին: Տխուր եմ եւ արցունքներս կը խեղդեմ: Հալէպը շատ սիրելի է ինծի: Ծնողացս ծննդավայրը եւ ինծի համար ալ նոյնքան հարազատ: Բաց տակաւին որքան աղէտներ պիտի հարուածեն սփիւռքահայ ամուր ամրոցներէն «երազային Հալէպը»:

Քուէյթի մէջ մաս կազմեցի լիբանանահայ գաղութի օժանդակութեան յատուկ յանձնախումբին: Տարբեր հայկական կառույցներէ ներկայացուցիչներով հաւաքուեցանք նիւթական ու բարոյական օժանդակութիւն եւ մասնակցութիւն բերելու լիբանանահայ գաղութին: Քուէյթի հայկական գաղութը թիւով փոքր է բաց հայութեան համար տրոփող սիրտ է: Այս օրերուն աւելիով համոզուեցայ թէ ինչքան հայկականութիւն կայ Քուէյթի գաղութին մէջ: Յերեկ եւ գիշեր միացուցին եւ խառնեցին եւ ուզեցին ամէն գնով օգտակար ըլլալ իրենց քոյրերուն եւ եղբայրներուն Լիբանանի մէջ: Յանձնախումբին համար կարեւորը հայն էր եւ հայուն հասնին էր: Այս եթէ մէկ կողմէ քաջալերական էր բաց նաեւ յուսադրիչ: Այդ այս դժուար օրերուն մէջ կան նոյնքան յուսադրիչ երեւոյթներ:

Հայաստանի Բժշկական Օժանդակութիւնը Հալէպի Հիւանդանոցներուն



Հայաստանի մարդասիրական առաքելութեան բժշկական խումբը 24 Օգոստոս 2020-ին, Հալէպի մէջ Հայաստանի գլխաւոր հիւպատոսութեան հետ համագործակցութեամբ, Հալէպի բուժօգնականութիւններուն փոխանցած է աւելի քան 2 թոն բժշկական եւ առողջապահական պարագայ: Այս մասին կը փոխանցեն «Մարդասիրական ակնագործման եւ փորձագիտական կեդրոն» ՊՈԱԿը»:

Հայաստանի պետականութիւնը իր նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը հասցուց ոչ միայն լիբանանահայութեան բաց նաեւ Լիբանանի: Այս ցոյց կուտայ երկու երկիրներու բարեկամական ամուր կապերը: Ու տակաւին կ'իմանանք թէ յատուկ ծրագիր մը կը մշակուի հայրենի պետութեան կողմէ օժանդակելու համար բոլոր լիբանանահայերուն որոնք կ'ուզեն Հայաստան տեղափոխուիլ:

Արցախի հանրապետութիւնը նոյնպէս հասաւ լիբանանահայ համայնքի նիւթական եւ բարոյական օգնութեան: Նախագահը յայտարարեց թէ պատրաստ է հարիւր ընտանիք ընդունիլ Արցախի մէջ:

Սփիւռքը ամբողջ գորաշարժի ենթարկուած է այս օրերուն՝ հասնելու համար լիբանանահայ համայնքին եւ անոր կարիքներուն: Բաց նաեւ օժանդակելու որպէսզի լիբանանահայ գաղութը վերակազմակերպուի:

Նոր վիճակ: Երեւի այդ: Բաց կայ նաեւ նոր միտք եւ նոր հոգի: Երեւի նոյնքան ճիշդ պիտի ըլլար ըսել վերանորոգուած միտք եւ հոգի: Նոր թռիչքներու եւ նոր վիճակներու մէջէն հայկական նոր ու նորոգուած եւ վերանորոգուած միտք եւ հոգի մը մէջտեղ կուգայ: Եւ այս է որ յուսադրիչ է: Միտք մը ու հոգի մը, ուր հայուն մտաւոր, հոգեկան եւ ֆիզիքական կարողականութիւնները կը մեկտեղուին ու կը համախմբուին, որպէսզի հայը շարունակէ ապրիլ:

Հայաստան, Արցախ, Լիբանան, Սուրիա եւ հայութիւնը ամէն տեղ: Այս յուսադրիչ երեւոյթը պիտի վերածել ազգային նոր եւ նորոգուած ու վերանորոգուած ռազմավարութեան մը:

Նոր թռիչք՝ նոր վիճակ: Նոր, նորոգուած եւ վերանորոգուած միտք եւ հոգի:

Անպայմանօրէն հայուն նոր-նորոգուող-վերանորոգուած միտքը եւ հոգին:

բժշկական պարագաներուն եւ «Հայ ծերանոց», «Դարմանատուն», «Բեթէլ» ընկերաբժշկական կեդրոններուն, շարք մը այլ բուժօգնականութիւններու մէջ ցուցաբերած բժշկական ամենօրեայ օժանդակութեան համար: Անոնց խօսքով հայ եւ սուրիացի բժիշկները համատեղ ջանքեր կը գործադրեն տուժածներուն օգնելու համար:

Հիւանդանոցի տնօրէնը շնորհակալութիւն յայտնած է նաեւ Հայաստանի իշխանութիւններուն, առողջապահական մարմիններուն առաջին իսկ օրերէն ցուցաբերած օգնութեան եւ աջակցութեան համար:

Ձարդերի Ստեղծման Թեմա Կարող Է Դառնալ Այն Ամենը, Ինչ Շրջապատում Է Մեզ. Լուսինե Յարուսիւնեան



ՀՐԱՉՈՒԻՒ ԱՆՍԱՍՏԵԱՆ

Վարչապետի տիկին Աննա Յակոբեանը, պարբերաբար, հանդէս է գալիս հայկական արտադրութեան հագուստով եւ զարդերով՝ գովազդելով տեղական արտադրանքը: Օրերս նա Շուշիի գորգերի թանգարանից լուսանկարներ էր հրապարակել, որտեղ կրկին հայկական արտադրութեան հագուստով եւ զարդերով էր:



Նկատել նրա իւրօրինակ ականջօղերը, որի հեղինակը «Լուսինե Յարուսիւնեան» զարդերի բրենդի հիմնադիր Լուսինե Յարուսիւնեանն է:

Լուսանկարներից դժուար չէր նկատել նրա իւրօրինակ ականջօղերը, որի հեղինակը «Լուսինե Յարուսիւնեան» զարդերի բրենդի հիմնադիր Լուսինե Յարուսիւնեանն է:

Գրքեր.am-ի «Երազանքից իրականութիւն» խորագրի շրջանակում Լուսինե Յարուսիւնեանի հետ զրուցել ենք վարչապետի տիկինը կողմից իր զարդերի նախընտրութեան, անցած ճանապարհի եւ բիզնեսում յաջողութիւններ գրանցելու մասին:

-Ունե՞ք յատուկ թեմատիկայ, որիմ, անպայման, պէտք է հավակնեն Ձեր կողմից ստեղծուած զարդերը:

-Ձարդերի ստեղծման թեմա կարող է դառնալ այն ամէնը, ինչ շրջապատում է մեզ: Կին, գեղեցիկ կին, արարող կին, վերջապէս, գեղեցիկը գնահատող կին, եւ այն



ամէնը, ինչ կարող է կապ ունենալ կնոջ հետ, իսկ կա՞ց մի բան, որ կապ չունենայ կնոջ հետ, մենք ամէնուրեք, չավարտվող թեմա է...

-Վերջերս նկատեցի, որ վարչապետի տիկինը նույնպէս Ձեր պատրաստած զարդերից է կրում: Ըստ Ձեզ ինչ՞ի համար է մախընտրութիւնը տրվել հեց Ձեր զարդերին:

-Ինձ թւում է գեղեցիկը սիրող եւ գնահատող իւրաքանչիւր կին անտարբեր չի կարող լինել նրբա-

ճաշակ զարդերի նկատմամբ, կարծում եմ, որ տիկին Յակոբեանը նոյնպէս գնահատեց իմ աշխատանքը, ինչը շատ հաճելի է:

-«Լուսինե Յարուսիւնեան» զարդերը որտե՞ղ կարելի է գտնել:

-Ձարդերը վաճառում են ե՛ւ արտասահմանում, ե՛ւ Հայաստանում, բայց հիմնական եւ գլխաւորը «Երեւան մոլլ»-ի եւ կոմիտասի «Երեւան Սիթի»-ի տաղաւարն է: Բոլոր վաճառարահներում պահպանուած են իմ ապրանքանիշին բնորոշ ամէն մանրուք:

-Միայն զարդեր էք պատրաստում, թէ այլ իրեր եւս հանդիպում են Ձեր բրենդում:

-Երբ նոր էի սկսել զբաղուել զարդագործութեամբ, 2004 թուական էր, այդ ժամանակ աշխատում

էի կավով, բացի զարդերից՝ պատրաստել եմ այն ամէնը, ինչն ինձ հետաքրքիր էր, նաեւ յուշանուէրներ: Հիմա նոյնպէս պատրաստում եմ ինչ-որ տուեալ պահին ցանկանում եմ, վերջին փորձը եղավ ժամացույցը, որը շատ գնահատուեց, սակայն զարդ ստեղծելը միշտ մնում է առաջին տեղում:

-Մինչեւ պատրաստի աշխատանք ունենալը՝ ինչ՞ գործընթաց էք անցնում, ստեղծագործելու համար ինչ՞ն է Ձեզ մօտի-

վացնում:

-Մինչ պատրաստի աշխատանք ունենալը պէտք է միտքդ արթուն պահես, յետոյ միայն մտքի, խելքի տարիներով ձեռք բերած հմտութիւնների եւ ենթարկուող ձեռքերի օգնութեամբ կատարես առաջադրանքը, իսկ յետագայում շնորհ կարող են ստեղծուել առա-

խապատուութիւնը տալով հայ ստեղծագործ մտքին, այո՛, կար յոյս, որ երկար տարիների լաւ եւ որակով արուած աշխատանքը նոյնպէս կգնահատվի:

-Ինչ՞ դժուարութիւնների էք հանդիպել յաջողութեան հասնելու ճանապարհին:

-Եթէ ասեմ դժուարութիւն-



Չադրանքը աւարտին հասցնելուց յետոյ, այսինքն՝ միշտ պէտք է աշխատել:

-Աղջիկները զարդեր ընտրելիս ամենակարեւորն ինչի՞ն պէտք է ուշադրութիւն դարձնեն:

-Ձարդը ընտրելիս պէտք է նայեն, թէ այն իրենց մասին ինչ է պատմելու կամ ինչ են ուզում, որ պատմի: Այո, զարդերը խօսում են, վստահ եղէք, դարեր առաջ էլ խօսել են:

-Երբ նոր էի սկսում բիզնեսը, երբեք կպատկերացնէիք, որ այն կը կրի Հայաստանի առաջին տիկինը:

ներ չեմ ունեցել, չէք հաւատա, բայց, այո, չեմ ունեցել, իմ ընտանիքը միշտ ինձ օգնել է, ընկերները նոյնպէս, ովքեր սկսեցին գնել եւ կրել, արդէն կար քիչ, բայց փաստացի եկամուտ, եթէ կայ եկամուտ, իրաւունք չունես ծուլանալու, պէտք է աշխատել, իսկ աշխատանքն ինձ այսօր դարձրեց այն, ինչ կամ: Իսկ այն աշխատանքը, որը սիրով ես անում, դժուար չէ:

-Երազանքները իրականանալու յատկութիւն ունե՞ն:

- Ինձ թւում է երազանքը փոքր տարիքում է լինում, այն քեզ




-Գիտէք, երբ ստեղծում ես, մի ուրիշ զգացում է, ես՝ ինքս, ուրախ էի, որ կարողանում եմ ստեղծել ու կրել, այո՛, ես հպարտանում էի ինձնով, յետոյ երբ ուրիշներն են կրում, պատասխանատուութիւնն է գումարում: Կայ գնորդ, ուրեմն՝ դառնում է բիզնես, այն ինչ վաճառում է, բիզնես է, ուրախանում ես, որ կարող ես գումար վաստակել, այսինքն գնահատում են քեզ, քո աշխատանքը որպէս մարդ, որպէս արուեստագէտ: Երբ տիկին Յակոբեանը սկսեց ներկայացնել հայ արուեստագէտին՝ նա-

հետ մեծանում է դառնում է նպատակ, իսկ յետոյ պիտի չթողնես քեզ հետ ծերանայ, այլ հասուն տարիքում պիտի իրագործես, եթէ իրագործես, ուրեմն կատարում է, այսինքն՝ միայն մեր միջամտութեամբ ու ցանկութեամբ:

-Ձեր խորհուրդը երիտասարդ գործարարներին:

-Պորհուրդ չգիտեմ կարող եմ տալ, թէ՛ ոչ, բայց ամէն ազնիւ, շատ ազնիւ գործի ետեւում է կանգնած յաջողութիւնը:

Լուսանկարների հեղինակ՝ Գեորգ Պերկուպերկեան



NATIONAL NOTARY ASSOCIATION
NOTARY PUBLIC

MEMBER

Garine Depoyan

626-755-4773

554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106

ghdepoyan@gmail.com

«Բաւարիան» Սահմանեց Ախոյեաններու Լիկայի Մրցանակ



Ախոյեաններու լիկայի գաւաթը 6-րդ անգամ նուաճած Միւնխիի «Բաւարիան» սահմանեց այս մրցաշարի մրցանակ: Գերմանիոյ ախոյեանները յաղթեցին 11-րդ անընդմէջ յաղթանակը՝ 21-ի աւարտած մրցաշրջանի բոլոր հանդիպումներու ընթացքին պարտութեան մատնելով մրցակիցներուն:

Գերմանացի Հանս-Դիտեր Ֆլիկի գլխաւորած խումբը գերազանցեց 2013-ին Եուլպ Հայնկեսի եւ Խոսեպ Գուարդիոլայի օրերուն «Բաւարիայի» մրցանակը՝ 10 յաղթանակ: Այդ մրցանակը կրկնած էր նաեւ Մադրիդի «Ռեալը» Կառլո Անչելոտիի ղեկավարութեամբ:

«Ռեալը» 2021 Թուականին Կը Փորձէ Մպարեին Զեռք Զգել

Մադրիդի «Ռեալը» ղեկավարութիւնը ընթացիկ փոխանակութեան շրջանի ընթացքին հրաժարուերէ փարիզի ՊՍԺ-ի ֆրանսացի յարձակող Կիլիան Մբայէին ձեռք բերելու մտքէն:



L'Equipe-ի տեղեկութիւններով՝ Արքայական ակումբը Մբայէի հետ կը փորձէ պայմանագիր կնքել 2021 թուականին, երբ ակումբի ֆինանսական վիճակը թոյլ կու տայ իրականացնել 21-ամեայ յարձակողի տեղափոխութիւնը:

Աւելի վաղ յայտնի դարձած էր, որ ՊՍԺ-ը բանակցութիւններ սկսած է Մբայէի հետ նոր պայմանագիր կնքելու նպատակով:

Ֆրանսացի յարձակողի պայմանագիրը փարիզեան խումբի հետ նախատեսուած է մինչեւ 2022 թուականի Յունիսը:

Ֆրանսայի առաջնութեան 2019/20 մրցաշրջանի ընթացքին Մբայէն մասնակցած է 20 հանդիպման, նշանակած՝ 18 գոլ, կատարած է 6 կոլային փոխանցում:

«Այաքսը» 15 Միլիոն Եւրօ Առաջարկած Է Սուարեսի Տեղափոխութեան Դիմաց

Կատալոնական «Պարսելոնայի» եւ Ուրուգուայի ազգային հաւաքականի յարձակող Լուիս Սուարեսը կարող է մարզական կարիերան շարունակել իր նախկին ակումբում՝ հոլանդական «Այաքսում», տեղեկացնում է Goal.com-ը:

«Այաքսը» բանակցութիւններ սկսած է 33-ամեայ յարձակողի ներկայացուցիչներու հետ եւ պատրաստ է անոր տեղափոխութեան դիմաց վճարել 15 միլիոն եւրօ:

«Պարսելոնան» դէմ չէ հրաժեշտ տալ ուրուգուայցի յարձակողին, որու պայմանագիրը ակումբի հետ նախատեսուած է մինչեւ 2021 թուականի Յունիս:

Լուիս Սուարեսը «Այաքսում» հանդէս եկած է 2007-2011 թուականներուն:

Կումանի Նշանակումը Զէ Փոխած Մեսիի Դիրքորոշումը

«Պարսելոնայի» արժենթինցի յարձակող Լիոնել Մեսիի ապագան կը շարունակէ հարցականի տակ մնալ կատալոնական ակումբում:



Football Italia-ի համաձայն՝ 33-ամեայ ֆուտպոլիստը կը շարունակէ դիտարկել «Պարսելոնային» հեռանալու տարբերակը՝ հակառակ անոր, որ վերջերս խումբի գլխաւոր մարզիչ նշանակուած էր Ռոնալդ Կումանը: Վերջնական որոշում կայացնելէ առաջ Մեսիին մտադիր է հանդիպելու հոլանտացի մասնագէտի հետ:

Արժենթինացիի գործող պայմանագիրը նախատեսուած է մինչեւ 2021-ի ամառը: Նախորդ մրցաշրջանին Մեսին ակումբային մակարդակի

Լոպետեգի. Աւելի Քան Արժանի Էինք Ախոյեանութեան



Սպանական «Սեւիլիայի» գլխաւոր մարզիչ Ժուլիէն Լոպետեգին մեկնաբանած է Եւրոպայի լիկայի եզրափակիչի ընթացքին Միլանի «Ինտերի» նկատմամբ տարած յաղթանակը:

«Մենք հիւանալի խումբ ունինք: Ֆուտպոլիստներն անհաւանական աշխատանք կատարեցին եւ յաղթեցին, քանի որ կը հաւատային իրենց յաղթանակին:

Հպարտ եմ, որ կարողացանք յաղթանակ տանիլ «Ինտերի» նման հզօր խումբի նկատմամբ: Աւելի քան արժանի էինք այս յաղթանակին: Այժմ մենք տուն կը վերադառնանք տիտղոսով: Այս խումբը երբեք չի յանձնուիր, ինչպէս կ'ըսուի մեր ակումբի օրհներգին մէջ», - Լոպետեգիի խօսքը կը փոխանցէ ՈւեՅԱ-ի մամուլի ծառայութիւնը:

Յիշեցնենք, որ «Սեւիլիան» յաղթանակ տարաւ «Ինտերի» նկատմամբ 3:2 հաշուով եւ 6-րդ անգամ նուաճեց Եւրոպայի լիկայի գաւաթը:

Պրունու Ֆերնանտեշը՝ Եւրոպայի Լիգայի Լաւագոյն Ռմբարկու

Անգլիական «Մանչեսթեր Եունայթեդի» եւ Պորտուգալի ազգային հաւաքականի կիսապաշտպան Պրունու Ֆերնանդեշը դարձաւ Եւրոպայի լիկայի 2019/20 մրցաշրջանի լաւագոյն ռմբարկու:



25-ամեայ Ֆերնանդեշը Եւրոպայի լիկայի աւարտած մրցաշրջանին դարձած է 8 կոլի հեղինակ: Երկրորդ տեղը Միլանի «Ինտերի» պեյճիգացի յարձակող Ռոմելու Լուկակուն կը գրաւէ 7 կոլով:

Պրունու Ֆերնանդեշը 2019/20 մրցաշրջանի ընթացքին «Սպորտինգի» եւ «Մանչեսթեր Եունայթեդի» կազմին մէջ մասնակցած է 50 հանդիպման, նշանակած է 27 կոլ, կատարած 22 կոլային փոխանցում:

Յիշեցնենք, որ Եւրոպայի լիկայի յաղթող դարձաւ սպանական «Սեւիլիան», որ եզրափակիչի ընթացքին 3:2 հաշուով պարտութեան

Սարգիս Ադամեան. Զիմա Գլխաւոր Նպատակս Մարզավիճակս Վերականգնելն Է

Ֆուտպոլի Հայաստանի հաւաքականի յարձակող Սարգիս Ադամեանը վերսկսած է մարզումները գերմանական «Հոֆենհայմի» ընդհանուր խումբին մէջ: Ակումբի մամուլի ծառայութիւնը գրուած է հայ ֆուտպոլիստի հետ:



«Ես շատ ուրախ եմ, որ դարձեալ կը մարզուիմ խումբին հետ: Մշտապէս մարզուած եմ անհատական ծրագրով: Այս տեսական եւ ծանր աշխատանք էր: Խումբի հետ մարզումը շատ աւելի ուրախ կ'անցնի:

Ես ինձ լաւ կը զգամ, բայց ստուգողական հանդիպումներու դեռ չեմ մասնակցիր: Աստիճանաբար կը մտնեմ գործընթացի մէջ: Վստահ եմ, որ յաջորդ շաբաթ արդէն կը կարողանամ աշխատիլ ամբողջական ծանրաբեռնուածութեամբ: Յաջորդ հանգստեան օրերուն, հաւանաբար, յայտաւորուած կ'ըլլամ ստուգողական խաղերուն:

Վնասուածք ստացայ, երբ իսկապէս լաւագոյն մարզավիճակի մէջ էի, Բունդեսլիգայում 5 կոլ նշանակած էի: Հիմա գլխաւոր նպատակը վերադառնալն է եւ մարզավիճակս վերականգնելը: Ատկէ յետոյ միակ նպատակս կ'ըլլայ դարձեալ կոլեր նշանակելը», - ըսած է Սարգիս Ադամեանը:

մէջ մասնակցած է 44 հանդիպումի, դարձած է 31 կոլի ու 26 կոլային փոխանցման հեղինակ:

ՄԱՐԱԶԴ



ԹՐՖԱՆՏԱ (ՎԱՆՏԱ) ՀԱՐՄԱՆՏԱՆԱԿԱՆ-ՉԱՎՏԱՐԵԱՆ (1945-2020)

Սրտի դառն կսկիծով կը գոլթենք մեր մօր, մեծ մօր, քրոջ, մօրաքրոջ, հօրաքրոջ, աներմօր եւ հարազատին՝ Թրֆանտա Չավտարեանի մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 17 Օգոստոս, 2020ին յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուզարկաւորութեան եկեղեցոյ կարգը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, 26 Օգոստոսին ժամը 1:00ին Սուրբ Ղեւոնդ (St. Leon) եկեղեցւոյ մէջ, Պըրպէնք, իսկ գերեզմանի կարգը Forest Lawn, Hollywood Hillsի գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝
- Օր. Զապէլ Չավտարեան
- Տէր եւ Տիկ. Ստեփան եւ Մարթա Չավտարեան եւ զաւակները Թամար եւ Աւետիս
- Պրն. Ռազմիկ Չավտարեան
- Տէր եւ Տիկ. Գուրգէն եւ Ռիթա Համալեան եւ զաւակները ձուլիս եւ Գլօի
- Եւ համայն Չավտարեան, Հարմանտեան, Պէրպէրեան, Դաւիթեան, Ղազարեան, Քէօշկէրեան, Մանուկեան, Դարփիւրեան, Պալեան, Համալեան, Պօղոսեան, Պարզութեան ընտանիքներ
- Փոխան ծաղկեպսակի կը խնդրուի նուիրատուութիւնները կատարել՝ Compatriotic Union of Hadjin
- 1493 Atchison Street
- Pasadena, CA 91104
- Memo: Sourp Kevork Church (Beirut)

ՅԱԲԱԿՑԱԿԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԱՐԱՖԵԱՆԻ մահուան տխուր առիթով (մահացած Պէյրութ) «Մասիս»-ի խմբագրութիւնն ու անձնակազմը իր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար իր զակիրն Յակոբին եւ եղբօր Տէր եւ Տիկ. Տիգրան եւ Վարդուհի Սարաֆեանին:

ՅԱԲԱԿՑԱԿԱՆ

ԱՆԱՀԻՏ ՄՈՒԹԱՅԵԱՆ-ՊԷՐՊԵՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով (մահացած Պէյրութ) Փաստինայի ՍԴՀԿ Փարամագ մասնաճիւղի վարչութիւնն ու անդամները իրենց խորագրաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար Տիկին Ազնիւ Մուլթաֆեանին եւ ընկեր Մինաս Մուլթաֆեանին:

S.S. Սահակ Բ Խապայեան Կաթողիկոս

Շարունակուած էջ 15-էն

եղբօրս Յարութիւնին մօտ:

Կիլիկիոյ պարպումին, իրենք եւս հետեւեցան դէպի Հալէպ գաղթողներուն, ու շեղելով մեկնեցան Պէյրութ, անկէ դէպի Եգիպտոս հասնելու մտադրութեամբ: Մնացին Անթիլիասի մերձակայքը ուր տակաւին չէր հաստատուած Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը: Հայրս կը չիշէր Սահակ Կաթողիկոսի Հալէպի մէջ կատարած Միւսուրհանքը եւ Անթիլիասի որբանոցը որ տասնամեակ մը ետք պիտի վերածուէր Կաթողիկոսարանի:

Արթուն եւ Անվիատ Յայրապետը Հակառակ յուսահատութեանց եւ յուսախաբութեանց, դաւաճանութեանց եւ անարդարութեանց S.S. Սահակ Բ Խապայեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը ընթացաւ յառաջ՝ խաչը ձեռքին եւ ձեռքը մաճին վրայ: Թէեւ իր պատմական Աթոռէն հեռու, սակայն ապահով Լիբանանի Անթիլիաս աւանին մէջ Հայրապետը ինք անձամբ հաստատեց Կիլիկիոյ Աթո-

ւր 1930 թուին, իրեն աջակից ունենալով S.S. Բաբգէն Ա Կիւլէսէրեան Աթոռակից Կաթողիկոսը որ կարճ ժամանակի ընթացքին նոր ստացուած թեմերը կազմակերպեց, Դպրեկանքին հիմը դրաւ, հրաւիրեց Շահէ Եպիսկոպոս Գասպարեանը որպէս Տեսուչ, զինք եպիսկոպոսացուց, աշակերտներ հասցուց եւ սակայն կանուխ վախճանեցաւ՝ ծերունի Սահակ Հայրապետէն երեք տարի առաջ՝ 1936 թուին:

Սահակ Բ Կաթողիկոս սրտաբեկ եւ սակայն խոհուն, հիմքը դրաւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին, եւ առանց տեսնելու անոր կառուցումը վախճանեցաւ 1939 թուին խոր ծերութեան մէջ, 90 տարիքը լրացուցած եւ 36 տարիներ գահակալելէ ետք: Իր Փոխանորդը եւ ձեռնասունը, Հաճնոյ երախտարժան Առաջնորդը՝ Պետրոս Արքեպիսկոպոս Սարաճեան կառուցանել տուաւ Մայր Տաճարն ու Նահատակաց Մատուռը իր ճաշակովն ու հսկողութեամբ, եւ արժանի կերպով եղաւ յաջորդ Կաթողիկոսը Մեծի Տանն Կիլիկիոյ որպէս Պետրոս Ա Հայրապետ:

Երբ Յայերենին Լրջօրէն Սօտեմանք

Շարունակուած էջ 13-էն

իրականութիւնը փոխելու համար:

Դպրոցը բաւարար չէ լեզուն թարմ պահելու համար: Դպրոցէն ետք ի՞նչ ճակատագիր կ'ունենայ հայերէնը մեր բերնին մէջ՝ հարցուցած ենք մենք մեզի: Մամուլը շատ աւելի մեծ աշխատանք կրնայ տանիլ, որ չ'ընեն: Հայկական կառուցներու մէջ աշխատող մարդոց ուղեղն ու կարելիութիւնները շատ սահմանափակ են ու աւելի կը սահմանափակուին հետզհետէ: Տակաւին, փոխանակ մեր կաղապարուած շրջանակները լայնցնելու, կաղապարները քանդելու, ներածում կատարելու, աւելի կը նեղցնենք զանոնք:

Հայերէնախօսութիւնը քաջաբերանք չի գտներ մեր աւանդական կառուցներուն կողմէ դժբախտաբար, հակառակ բոլոր տեսակի հայրենասիրական ճառերուն եւ հռետորական ելոյթներուն: Ասիկա պատճառ կը դառնայ, որ պաշտօնական շրջանակներու մէջ հայերէնախօսութիւնը չտարածուի: Ոմանք կ'ըսեն «Մենք աս կ'ընենք, ան կ'ընենք, ասպէս կ'ընենք, անպէս կ'ընենք»: Ներողութիւն: Այդ «եղած»ներուն արդիւնքը ես չեմ տեսներ:

Օրինակ մը տամ: Գաղութ մը կայ, ուրկէ մենք շուրջ տասը աշխատակիցներ ունինք: Այդ գաղութին «տէրեր»ը, «մտաւորականներ»ը տեղեակ իսկ չեն, որ իրենց գաղութին մէջ առաջն գրող ու գրել փորձողներ կան, ոչ ալ հետաքրքրուած են անոնց գոյութեամբ:

Արժանիքի մեր աշխատակիցներէն մէկը ըսած է ինձի, որ իր ծնողները հայերէն չէին գիտեր, սակայն ինք դպրոցէն յետոյ նաեւ ակումբին մէջ սորված է լեզուն եւ մեր քով ալ իր փորձերը կը շարունակէ: Քանի՞ հոգի կարելի է գտնել իրեն պէս Արժանիքին մէջ՝ դուք պէտք է գիտնաք:

Ես տեղեակ եմ, որ յիսուն տարի առաջ Արժանիքին մէջ խումբ մը հայ երիտասարդներ մէջտեղ եկած են, որոնք քսան տարեկանէ ետք փափաքած են հայերէն սորվիլ եւ սորված են: Ի՞նչ տեղի ունեցած է այն ատեն ձեր գաղութին մէջ, որ կրնայ նաեւ այսօր տեղի ունենալ՝ դուք պէտք

է այս հարցումին պատասխանէք:

«Հայերէնախօս ակումբ»՝ ահաւասիկ լուծում մը, մանաւանդ՝ երիտասարդներու համար: Ես ծանօթ եմ օտար լեզուներ խօսող խմբակներու Գերմանիոյ մէջ, օրինակ: Ոչ միայն կուսակցական, այլ լեզուական ակումբ է ըսել ուզածս, որ շարունակական բնոյթ ունենայ, ոչ թէ ժամանցի շրջանակ, այլ նաեւ արտադրող, - ոչ թէ տարին մէկ՝ Կաղանդի կամ Զատիկուան տօնի պէս, - ուր լեզուի հետաքրքրութիւնը տիրապետող ըլլայ, ոչ թէ՛ գաղափարներու կամ ճաշատեսակներու: Բայց մենք աս իմաստով հասուն ժողովուրդ մը չենք դեռ պէտք է ընդունինք: Տարուած ենք մեր տարբեր գոյներով: Այդ է «սխալ»ներէն մէկը, եթէ անպայման կ'ուզէք սխալներու մասին խօսիլ:

Այսօր սակայն համացանցի դար է: Քով քովի գալու կարիքն ալ չկայ: Թող հաւաքուի մ'յս գաղութին մէջ խմբակ մը ու թող ունենայ այլ գաղութէ մը ուսուցիչ կամ հարցաւար: Կը կարծեմ, որ ատքանին համար ալ հասուն չենք, որովհետեւ դեռ չենք զգացած մեր լեզուին կարեւորութիւնը:

Մենք մեր լեզուին ներկայութիւնը չենք զգար: Ա՛ս է բուն հարցը: Մեր լեզուն ճառերու, հարստութեան, խանդավառութեան նիւթ է: Մեր նիւթը չէ: Շատ աւելի ճիշդ է, առանց չափազանցութեան, ըսել, որ ան մեր հաւաքական ատելութեան ու արհամարհանքին առարկան է:

Իմ աս արտայայտած գաղափարներէս ու առաջարկներէս շատ աւելի փայլունները կան, արտայայտուած են, խորհրդաժողովներ, հանդիպումներ տեղի ունեցած են քանիցս, սակայն մակերեսային աշխատանքն է տիրապետողը, որ տեղեակ չէ, թէ հինգ տարի յետոյ ի՞նչ բերքի առջեւ կրնայ գտնուիլ՝ գէթ մօտաւորապէս:

Մեր բանալի անձերուն՝ դեկավարներուն համար ալ այսօր յստակ չէ՛, թէ ՀԱՅԵՐԷՆԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՆ ՈՒ ՀԱՅՆ է:

.....
Իշխան Չիֆթճեանի պատասխաններէն յետոյ մեզի կը մնայ գնահատել անոր ներդրումը եւ անսպառ աշխատանքը հայերէն լեզուի տարածման համար: Կը հրաւիրեմ
այցելել
hayerenblog.wordpress.com.

ՄԱՍԻՍ **ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 125,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State: ----- Zip Code: -----
Country: -----
Tel: ----- Email: -----

Ժամկետը լրանում է: Լրացրու 2020 մարդահամարի հարցաթերթիկն այսօր:

Քո պատասխանները կօգնեն որոշելու, թե ուր պետք է հատկացվեն առողջապահության, արտակարգի իրավիճակների ծառայությունների և կրթության համար նախատեսված միլիարդավոր դոլարներն ամեն տարի՝ հաջորդ տաս տարվա ընթացքում: Եթե չես լրացրել մարդահամարի հարցաթերթը, ապա հաշվառողը կմոտենա քեզ օգնելու համար՝ դիմակ կրելով և հետևելով տեղական կանոնակարգերին, որպեսզի ապահովի յուրաքանչյուրի անվտանգությունը:

Մարդահամարի հարցաթերթը առցանց լրացնելու կամ փոստով այն ուղարկելու համար դեռ ժամանակ կա:
Իմացիր ավելին 2020census.gov/hy կայքից:

[2020CENSUS.GOV/hy](https://2020census.gov/hy)

Վճարված է ԱՄՆ-ի Մարդահամարի Բյուրոյի կողմից

Shape
your future
START HERE >

United States®
Census
2020